2362
5 XV. 5



ՕՐԱԳՐՔ

ՔՆԴՀԱՆՈՒՐ ԱԶԳԱՑԻՆ ԼՈՒՍԱՒՈՐՈՒԹԵԱՆ ԵՒ ԳԻՏՈՒԹԵԱՆ

1862

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԵԳՆԱՑՔ.

ԱՄՍԱԾԻՏ 1.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.

	Եր.
ՅԱՌԱՋԱԲԱՆ ՀԻՒՍԻՍԱՓԱՑԼԻ 1862 ԹՈՒԱԿԱՆԻ. Ս. Նազարեանց.	1 — 6
ԱԹԱԼԱ ՇԱՏՕԲՐԻԱՆԻ. Ս. Նազարեանց.	7 — 35
ԵՐԵՒՈՒՅԹ ԿԱՆԱՆՑ ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻՆԵՐՈՒՆ Գ. Բեկժանով. . .	36 — 38
ԱՐՁԱԳԱՆՔԻ ՀԱՇՏՈՒԹԻՒՆԻՑ	39 — 43
ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՔ. Աբրահամ Նազարեանց և Վ. Մահտեսեանց.	44 — 48

ՎԱՄՊԱԿԱՆ.

ВЪ ТИПОГРАФІИ ЛАЗАРЕВСКАГО ИНСТИТУТА ВОСТОЧНЫХЪ ЯЗЫКОВЪ.

1862.

ՅՈՒՆՈՒԱՐ 1862 ԹՈՒԱԿԱՆԻ.

Մի վախեցիր, քաջ նաւարկու, յառաջ խազա.
Քանի որ քո առաջնորդն է Ճշմարտութիւն,
Ծովաժայռից, մրրիկներից երկիւղ չկայ։

Թող կատաղին գազան դարձած տարերք բոլոր,
Թող մի րոպէ ծածկեն աչքիցդ լոյս Հորիզոն,
Ովկիանում քեզ այդ բանը չէ անսովոր։

Դու կողմնացոյցդ ձեռնում բռնած իրրև ճրագ,
Քաջ գիտակից թէ ուր կամիս գնացքդ ուղղել,
Ալիք ու ծով ճեղքիր, անցիր դէպ ի նպատակ։

Ահա նախանձ, տգիտութիւն, հոգիք վատթար,
Քո համարձակ թռիչք փակել թոյլ, անկարող,
Գործ դրեցին իւրեանց արժան ամեն հնար։

Երևեցան շար յուզաններ, պիղծ մատնութիւնք,
Բայց անօգուտ. Ճշմարտութեամբ զրահաւորին
Ձեն բաւական դժոխքի բոլոր զինուորութիւնք։

ԱԶՆԻՒ ԲԱՐԵԿԱՄՆԵՐ,

Հուսիասիայը դարձեալ երևումէ հայկական երկնակամարի վրայ, թէև մի փոքր յետ մնալով յառաջաշարժ ժամանակից։ Ոչ պատճառ չէ որ Հուսիասիային շրջապատը լինելով ծանրաքայլ և դանդաղ, նոյնպէս ծանրաշարժ ու դանդաղկոտ է գործում և Հուսիասիային թևերի թռիչքը։ Յիրաւի, թանդ բան է ժամանակը, նա մի արծաթապլուխ է որ իսկոյն պէտք էր շահեցնել և մեծ տոկոսքով, բայց Հայոց ժողովրդին այդ բանը հասկացնել այս րոպէիս դժուար է. և ոչ մի աղգ աշխարհի երևոյն որ ապրած էր այնքան դարեր այնպիսի տրտում մոռացու անգործութեան մէջ, ինչ-

պէս մեր սիրելի Հայերը, կարող է իսկոյն խնդամուտ լինել մի այդպիսի ճշմարտութեան. իսկոյն առողջապէս կամենալ եւ առողջապէս գործել: Սակայն Հիւսիսափայլն հրատարակողը չէ եւ ամենևին անամենիմաց. կան, այո՛ կան ազգի մէջ մարդիկ, թէեւ շատ սակաւաթիւ, որ դիտելով ժամանակի արժէքը, ցանկացած են օր մի յառաջ ողջունել Հիւսիսափայլն երևելը. եւ դորա համար գործ են դրած իւրեանց ըստհարերութիւնքը, որչափ կարող էին: Ահա այդպիսի Հայերի պարծանքն է, որ եւ այժմ դուրս է երևում Հիւսիսափայլը, թո՛ղ մի փոքր յետոյ, բայց ոչ ամենևին չքամոլով, ինչպէս շատ սրտերի խղճն ու ցանկութիւնն էր: Այսպէս է հաճոյ Նախանձամութեանը, որ անյաղթելի միայ ճշմարտութիւնը, որ նորա ձայնը երբեմն մեղմ, եւ երբեմն սաստիկ հնչեմնով բարբառի մարդկութեան մէջ, ուրախացնէ ճշմարտասէր մարդերի սիրտը եւ արտմութեամբ ու ցաւով լցուցանէ սատակրնների հոգին: Այսպէս է հաճոյ նախանձամութեանը, որ Հիւսիսափայլն անբասնացական թշնամիների ուրախութեան ծնանիմբութիւնը իւրեանց խըղդային ծակամուտերում, փոխուի դէպ ի սուգ եւ լայ, որպէս պատիժ նոցա թէթեւամիտ եւ փոքրոդի ուրախութեանը, երբև թէ իւրեանց հերոսական քաջութեամբ ջարդ ու փշուր էին արել ճշմարտութիւնը եւ թաղել էին գերեզմանի մէջ, անվերակենցաղելի յաւիտեան: Այնօսրամիտներ, որ կարող էին մտածել թէ արեգակը պիտի արտաքսուի երկնակամարից, որովհետև նորա ճառագայթները ծակուէն նոցա ցաւագար աչքերը: Երբարև արեգակը կարող է մի քանի ժամ ամպերի տակ ծածկուիլ, բայց ամենևին փախստական լինել այն տեղից ուր նորան անդրդուելի հիմքերի վերայ հաստատել է Երարչի ձեռքը, անկարող է: Խնդութեան աստուածդիը կարդը անփոփոխելի է, որպէս նոյն ինքն Աստուած. ճշմարտութիւնը մի արեգակ է, որի լոյսը ոչ ոք կարող չէ շիջուցանել, թէեւ հազարաւոր խեղագրներ հեռուից ու մօտից փչելով պատառէին թոքերը հանդցնելու նորան: Ճշմարտութիւնը մի կենդանի ջրի աղբիւր է. այո՛, դու կարող ես այս տեղ նորա առաջը փակել բայց նա մի այլ տեղ ճանապարհ կը գտանէ իւր համար, և — ամ ջրամանալի զօրութիւն ընդութեան — ճեղքելով ապառաժը, դուրս կը թափէ իւր հեղեղը մի այլ տեղից: Հիւսիսափայլն հրատարակողը այս բառերը հնչեցնելով այս տեղ, երբէք կամք չունի, մանաւանդ թէ անյոյս է բժշկել այնպիսի անհնարին բարոյական

ախտերով ախտացած սիրտեր, որ ամենևին վատ են ուղիղ դպա-
ցողութեան համար, որ ոչինչ այլ ցանկութիւն չունին բարեաց
կեանքում, բայց ի բարեաց պարշելի խոցերի բղխուածը դուրս վի-
ժելուց ազգի մէջ, որ գոնեայ զղրանով մի փոքր հանգիստ գտա-
նէին. բայց ի զուր. այժմեան մարդիկը ժամանակ չունին ուշադիր
լինելու այդպիսի կտրած, դէպ ի մահ գատապարտուած ցաւագար-
ների. ամէն մարդ իւր կեանքի և փրկութեան հոգսումն է, և կոխ
տալով այդպիսիների վերայից պիտի է յառաջ գնալ յառաջա-
շարժ ժամանակի հետ. ով կամի յետ մնալ, թող մնայ, բայց թող
լաւ իմանայ, որ քամակից եկողները նորան առնակոխ առնելով, յա-
ռաջ կ'երթան քաջ զօրականների պէս, պրաւելու յաղթութեան
պարծանքը:

1861 թուականի ՝իւսիսափայլի վերջին թերթերից յայտնի
կը լինի մեր ընթերցողներին թէ ՝յառաջադէմ հայասացը ինչպէս
է այն չարագործութիւնների վերայ, որ եղան ՝իւսիսափայլի ընդ-
դէմ, որ և չէին նորա համար մի նորանշան տեսիլ. միայն թէ նա
ցանկացած կը լինէր, որ դաքա հեռի մնացած լինէին իւր ազգից:
՝ովհաւ փոխանակ արիւն պահպան լինելու իւր ոչխարի վերայ,
ինքը պատառող գայլ դարձաւ դէպ ի նա. հայրը մոռանալով իւր
ծնողական գութը, մի անբնական գահճի դործ կատարեց դէպ ի
իւր հաւատարիմ և անմեղ զաւակը. լոյս ցերեկով հայհոյվեցաւ
ճշմարտութիւնը այն մարդու բերանով, որ ըստ իւր կոչման պիտի
լինէր քարող և պաշտպան ճշմարտութեան. ով կարող է թագու-
ցանել մի անթագուցանելի խայտառակութիւն: Գիտեմ, ՝այդ
շատերի համար չկայ ոչինչ համաշխարհական դատաստան, որին
ասումեն Դատաստանիք մարդկութեան պատմագրութիւն. բայց այդ-
պիսի անհաւատներից դորանով դուրս են հանում միայն իւրեանց
անձը հաւատացեալ մարդկութեան կարդից և դոյա համար իւրեանց
առօրեայ չարագործ կեանքի հետ միասին այս աշխարհումն, վեր-
ջանում ամենայն բան: ՝իւսիսափայլի հրատարակողի հաւատը
այլապէս է. նա հաւատում բոլոր ճշմարիտ քրիստոնեաների հետ
միասին թէ կայ հատուցումն և այս աշխարհում պատմագրութեան
արդար դատաստանով, և հանդերձեալ աշխարհում, ինչպէս ամե-
նայն ոք արժանի էր ըստ իւր դործերի: ՝յառաջադէմի հաւատը
անդողդողդ է, թէ մի օր, դալոց հայկական սերունդը իրրև անա-
չառ և անողոքելի դատաւոր կը հատուցանէ ՝իւսիսափայլին այն

պարտքը, որ շատերը այժմեան սերունդից այս կամ այն ոլորտի անձնական, փոքրահոդի պատճառով չկամենին ոչ խոստովանել և ոչ իսկ հատուցանել: Ուրիմն թող լուռ մնան դրբա, կամ թէ հայհոյեն, ոլքան կամին, այն ստոյգ ճշմարտութիւնը որին մի այն մինչև այժմ, ըստ իւր դիտութեան և խղճի, ապատասխանել է Հիսայտիայը. բայց սա կարող չէ լուռ մնալ, ինչ որ ուսել է և ուսանում ամեն օր, պիտի ուսուցանէ բարձրաձայն. այս և այն խնդրոյն հայհոյանքին և աղմնատասխանութեանը պատասխանի տալ ոչ յանձնառու է և ոչ իսկ ժամանակ ունի: Եւ փառք Աստուծոյ. եթէ բարեմիտ չէ նորա ընթերցողների հատարակութիւնը — կարող չէ և սա լինել աղքի դատելի անդրադարձութեան պատճառով — այնու ամենայնիւ կան անձինք որ փափաղելով փափաքումեն Հիսայտիայի թերթերին, և դորա համար աշխատել քաղցր պարտականութիւն է համարում նա իւր վերայ: Ուրիմն թող խնդան մեր հետ միասին աղքի բարեացակամքը, որ մի բարի գործ ոլ սկսուել է աղքի մէջ Հիսայտիայովը, և այսուհետև պիտի յառաջ տարուի, եթէ ոչ նոյն քանակութեամբ թերթերի, անտարակոյս մի և նոյն հիմնաւոր բովանդակութեամբ: Հրատարակողը միտ դնելով ժամանակի տարաժամելուն, արծաթի փոքրութեանը որ հասել է նորան մինչև այս րոպէս, կարող է միայն առաջարկել իւր ընթերցողներին երկք թերթ ամսական, փոխանակ առաջնի օրերի 5 կամ վեց թերթի. բայց յուսով է, որ Հայոց պատուելի հատարակութիւնը հասկանալով գործի դժուարութիւնը, հնարաւորութիւն կը տայ հրատարակողին, առնէ առիս յաւելցնել Հիսայտիայի թերթերի թիւը և հատուցանել նորան առաջնի հինգ կամ վեցթերթեայ քանակութեանը, այն պայմանների հիման վերայ, որ հրատարակութեան անցեալ տարուս վերջումն:

Հրատարակողը չկամի ոչինչ տեսուր մտածութիւնք առնել իւր Հայերի հետ, սկսանելով 1862 թուականի Հիսայտիայը. դրբա անօգուտ են մի այնպիսի աղքի մէջ, ուր ամենայն բան բարձի թողի արած, մնացել է դիպուածի կամքին. ուր ոչ օր, ոչնչանալով ձեռքումը և հրամանն և կարողութիւն չէ մտածում աղքային յառաջադիմութեան բանի վերայ. կամ մանաւանդ գործ է սածում այդ հրամանը և կարողութիւնը, փակելու յառաջադիմութեան ճանապարհը. Հայոց աշխարհը պիտի ինքն ըստ ինքեան շինուի, բարեկարգուի, զարդարուի ծաղիկներով և վարդերով,

առանց աշխատասէր վարող ցանուղների հոգաբարձութեան, այժ մինչև այժմ չլսած ու չտեսուած հրաշագործութեամբ: Երբ որ պիտոյ է մի գործ կատարուի ազգի համար, և հարկաւոր էր անպատճառ ղեկանք յանձն առնուլ, կը տեսանես միայն, որ և մեծատունը և չքաւորը մի և նոյն չափով գործակատար են, առանց միտ դնելու այն ահագին անհաւասարութեանը որ կայ մեծատունի և չքաւորի կարողութեան մէջ: Շատ մեծատունք չեն պատկանում ևս իւրեանց սրտով ազգին, այլ իւրեանց անձնական բարեկենդանութիւնը է նոցա համար և ազգ և ազգային օգուտ. և ինչ որ ղրկանութեան թերթերի վերայ չէ խոնկ և կնդրուկ նոցա քթին, նոցա երբէք չափած մեծագործութիւնների համար, դու չէ թէ և արժանի գատապարտութիւն նոցա նեղսած ու փոսած անձնասիրութեանը և վնասակարութեանը ազգին, այլ բոլորը ի հարկէ ոչ թէ պարզապէս անհաճոյ է նոցա, այլև պատճառ ամենայն վատթար հնարների գործ դնելու, ամենայն համախոհների հետ միանալու, որ վնասեն մի համարձակախօս դրատոր գործարանի ազգի հրապարակի մէջ: Մեծատունք հրաժարուած, ձեռները լուացած ազգից և նորա ամենաղնիւ բարոյական ու իմացական բարգաւաճութիւնից, մնացել են միայն ՝իւսիսափայլին օգնականք մի փոքրիկ բազմութիւն ըստ մեծի մասին չքաւորների. ձշմարիտ է, 2000 տարի յառաջ, երբ Պրիստոս յայտնուեցաւ ՝րկից խստապարանոց և քարասիրտ ազգի մէջ, նորա բարեկամքը և հետևողքը չեղան ոչ մեծատուն փարիսեցիք և ոչ մեծամիտ տիմոնը քահանայապետք, այլ աղքատ ձկնորսներ և չքաւոր արուեստաւորներ. ձշմարտութիւնը անարժան էր մեծատուններին և մեծատունքը անարժան էին ձշմարտութեանը. նոյն բանը տեսանում ենք և ՝այելի մէջ, առանց կորուսանելու մեր սրտի խաղաղութիւնը. ըստ որում կենդանի է մեր մէջ այն հաւատը, մանաւանդ թէ 2000 տարի ժամանակ կանգնած է մեր աչքի առաջև որպէս մի հսկայաձև ապացոյց, թէ ձշմարտութիւն ասած բանը ի սկզբանէ անտի մինչև այժմ սովոր է նախ և յառաջ տիրապետել չքաւոր մարդերի խոնարհ և յանձնառու սրտերին և ապա մէջ ձգելով իւր երկնային սերմերը, ասես թէ աւելի ապահով ձանապարհով յառաջ էր գնում դէպ ի տիրապետութիւն աշխարհիս մեծամեծների դոռոզ սրտերին: Ահ յառաջ թէ յիտոյ և ՝այոյ հզօրս մեծատունքը պիտի խոնարհին իւրեանց գլուխը ձշմարտութեան առաջև և հասկանան այս-

սօր կամ էդուց, որ մեծատունը, ձշմարիտ մեծատունը նա է, որ և մեծատուն է հոգով ու սրտով, այսինքն լուսաւոր իմացականու-թեամբ և ազնիւ դգացողութեամբ, առաքինական վաստակներով և աշխատհաշէն բարեգործութեամբը յօդուտ մարդկութեան: Ապա թէ ոչ, այն մեծատունքը որ միայն իւրեանց միլիոններովի զօրութեամբ իւրեանց համալ վարժամ ապրուստն, ամենայն լուսթեան և առա-ւոտթեան մէջ լոլ տալով, այլև մնացուածն թէ, ունէին իրաւունք պատիւ և մեծարանք պահանջելու իւրեանց ընկերից — այսպիսիքը մեր ժամանակներում, ուր ընդունուած միայն իմացական ու բա-րոյական մեծատունութիւն, կարող են միայն, մնացող մարդերի աչ-քում, գտանել արհամարհանք և նախատինք: Ու Ատուծոյ առա-ջև և ոչ արդարադատ մարդկութեան դատաստանի առաջև կայ ակնառութիւն. ունին բարեգործութիւն, յառաջացած կենդանի հաւատից և մաքուր, անարատ աղբիւրներից. կարող ես պարծե-նալ, թէ մի քանի աղիւս դրած ես դու ողջաշէնութեան տաճա-րի և մարդկութեան բաղդաւորութեան վերայ. այո այնուհետև մեծատուն ես դու, արժանի ես խունկի և աղօթքի. ապա թէ ոչ, մեր կարծիքով, չքաւորից չքաւոր և թշուառներից թշուառ:

Հիւսիսափայլն հրատարակողը կարող չէ իւր փոքրիկ ձա-ռախօսութիւնը եղբայրակել, առանց շնորհակալութիւն մատու-ցանելու այն սակաւաթիւ ազնիւ պարոններին, որոնց փոքր ի շատէ հոգաբարձութեամբ երեւումէ ներկայ 1862 թուականի Հիւսիսա-փայլը: Ծողք մեք և ազդի բարեմիտքը մեր հետ նայենք դորա վե-րայ, որպէս մի մխիթարական ապացոյցի վերայ թէ ոչ ամենևին ցամաքել է առաքինութեան աղբիւրը Ռուսաստանի Հայերի մէջ, այլ թէ հազարաւոր վաստակներովի մօտակայքում, կայ և գտան-վում մի փոքրիկ հաստատութիւն ազնիւ, հայրենասէր հոգինե-րի, որ այո պատրաստ էին, ինչպէս և ինչով կարող են, օգնական լինել իւրեանց սիրելի Հայրենակիցներին. մի փոքրիկ հաստատու-թիւն ազնիւ և լուսաւոր Հայերի, որ դիտեն յարգել գալոց սե-րունդի դաստիարակը իւրեանց վերայ, որոնց մէջ կենդանի է այն հաւատը թէ կորած չէ և մի կաթիլ առաքինութիւն, և մի լոմայ բարեգործութեան որ ունէին նորա ձգելու ազգի գանձանակի մէջ. կորած չէ ոչ մարդկութեան դատաստանի առաջև, և ոչ աստուա-ծային արդարութեան կշռի մէջ:

Ս. Նալբեանց:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆՔ·

ԱՔԱԼԱ [1])

(ԳՐԵԺ ՇԱՏՕԲՐԻԱՆ ՓՐԱՆՍԻՍԿՈՑ)

ՅԱՌԱՋԱԲԱՆ·

Ֆրանսիան ունէր մի ժամանակ Հիւսիսային Ամերիկայի մէջ մի ընդարձակ թագաւորութիւն որ տարածվումէր Լաբրադորից մինչև Ֆլորիդա, և ատլանտեան ծովեզերքից մինչև առաւել հեռաւոր լիճերը բարձր Կանադայի։

Ազգս մեծ մեծ գետեր յառաջանալով նոյն սարերից, բաժանումէին այս անչափելի հողատարածութիւնները. այսինքն գետը Սուրբ Լաւրենտիոսի, որ դէպ ի արևելք թափվումէ իւրանուն ծովածոցի մէջ. Արևմտեան գետը որ իւր ջուրերը տանումէ դէպ ի անծանօթ ծովեր. Բուրբոնեան գետը որ հարաւից դէպ ի հիւսիս վիժումէ իւրեան Հուդսօնի ջրագոգի մէջ, և Միշասեբէ (Միսիսիպի) որ հիւսիսից դէպ ի հարաւ ցած է թափվում Մեքսիկեան ծովածոցի մէջ։

Ա՛յերջին գետը աւելի քան թէ հազար ասպարէզ ընթացքի մէջ, ջրուում մի պատուական աշխարհ որին միացած տէրութիւնների բնակիչքը ասուում նոր Եգիպտ, և որին Ֆրանսիացիք թողել են քաղցր անունս Լուիզիանա։ Հազարաւոր միւս գետեր կերակուր տալով Միշասեբէին, որպէս Միսուրի, Իլլինօա, Ականցա, Օհիո, Վաբաշ, Տննազ, պարարտացնումեն նորան

---

[1]) Այս գրուածը Շատօբրիանի պատկանումէ նորա բանաստեղծական գործերին և յառաջացել է առանձին տպատարութիւններից որ առացել էր պատանի, Հոգեվառ Հեղինակը, իբրև փախստական Ֆրանսիայից Ռեվոլիւցիօնի ժամանակում, ապրելով Հիւսիսային Ամերիկայի վայրենի անտառների և Ինդիանացոց մէջ։ Այս տեղ ծանօթանալով նա դեռ ևս Եւրոպական կրթութիւնից չլօշանուած, բնութեան որդիների հետ, առացաւ նոցա սէրը, քարչէց նոցա հետ խաղաղութեան թամբաքուն, ճաշակեց նոցա քաղցր ընկերին և սիրեց նոցա պարսխաղութիւնը։ Խոստովանելով, որ այս բանաստեղծական գործը Շատօբրիանի ձոխ ու փարթամ է զարմանալի դեղեցիկ մանաւորութեամբք, առիպուած ենք ասել որ Շատօբրիանը կարողացել չէ յառաջացնել գորանում մի կատարեալ դաշնակութիւն (զուգապատշաճութիւն) նիւթի և ձևի մէջ. բայց նա հասել է այս զուգապատշաճութիւնը մի այլ փոքրիկ սիրապատում գրուածի մէջ, որ է les Aventures du dernier Abencerrage որ նոյնպէս ժամանակով կը տանք Հիւսիսափայլի ընթերցողներին։

Յուրեանց տղմով և պտղաբեր են գործում իւրեանց ջերմով։ Երբ որ այս գետերը զայրացել էին ձիւների հեղեղներից, երբ որ փոթորիկները ցած էին գլորել ամբողջ կտորներ անտառներից, արմատախիլ ծառերը հաւաքվումեն աղբիւրների վերայ. շուտով ճախնային տիղմը ամրացնում է նորանց, լիանալոյքը շղթայումեն նորանց, և տունկեր ամենայն կողմից արմատ բռնելով, վերջապէս հաստատնդումեն այն աւերակները։ Նոքա, բերուելով փրփրուն ալիքների հոսանքով, ցած են իջանում դէպ ի Սեհյասերէն։ Գետը տիրապետում է նոցա, վարում է նորանց դէպ ի միքսիկեան ծովածոցը, դադարեցնում է աւազուտքի վերայ և այդպէս բազմացնում է իւր ջրաբերանների թիւը։ Ժամանակ առ ժաման ել նա բարձրացնում է իւր գոտացրը, անցանելով սարերի տակից, և իւր սանձակոտոր ջերմով շրջապատում է անտառների սիւնաշարքը և Ինդիանացոց գերեզմանների բուրգերը. դա է անապատների նեղոս գետը։ Բայց վայելչութիւնը միշտ կապակից է վանմասաւոր թեան հետ բնութեան տեսարանների մէջ. այն միջոցին, երբ գետի միջին հոսանքը քարշելով տանում է դէպ ի ծովը եղևիններն և կաղնիների դիակները, դուռ տեսանում երկու կողմնակի հոսանքի վերայ բարձրանալով գետեզերքի երկայնութեամբ լողացող կղզիներ պիստիա և նունուֆար բուսականների որոնց դեղին վարդերը կերպարանվում են իրրև փոքրիկ վրաններ։ Կանաչ ճաճանչ, կապտափետուր արտէայք, վարդակարմիր ֆլամինգոներ, մանուկ կրոկոդիլոսներ, նաև նստած շրջումեն այս ծաղկազարդ նաւերի վերայ, և գաղթականքը պարզելով իւրեանց ոսկի առագաստները ընդդէմ հողմին, գալիս են քնած, իջևանելու գետի որ և իցէ առանձնացած խորշի մէջ։

Սեհյասերէի երկու եղերքը ցուցանում են մի անսովոր, հրաշալի տեսարան. արևմտեան եղրումը սաւանեան դաշտերը մերկանում են քո առաջև անթովանդակելի տարածութեամբ. նոցա կանաչազարդ երէկքը հեռանալով, ասես թէ վեր են ելանում դէպ ի երկնքի կապուտակ կամարը, ուր չքանում են նոքա։ Այս անսահման մարգագետինների վերայ տեսանում դուռ վտանգաւորիք շրջելով երկու կամ երեք հազար վայրենի գոմէշների երամակներ։ Երբեմն մի ուռուցաւոր եղն, տարիքով բեռնաւորուած, լող է տալիս պատառելով ալիքը և գալիս է հանգստանալու բարձրահասակ խոտերի մէջ, Սեհյասերէի կղզիներից մինի վերայ։ Նայելով նորա, երկու կիսալուսնով զարդարած ճակատի վերայ, քննելով նորա, հին օրերն և տղմոտ մբոյքը, դուռ կը համարէիր նորան գետի աստուածը, որ մի քաղցրացած հայեացք ձգումէր նորա ջրերի մեծութեան և նորա եղերքի վայրենի առատութեան վերայ։

Այսպէս է տեսարանը արևմտեան գետեղրի վերայ. բայց նա փոխվում է հանգիպակաց եզրի վերայ և կացուցանում է մի զարմանալի ներհակութիւն առաջինի հետ։ Ամենայն տեսակ, ամենայն գունեղով, ամենայն խնկահոտութեամբ ծառեր, կախուած ջրերի հոսանքի վերայ, համակարգած ապա-

ուժերի և սարերի վերայ, ցան և ցիր եղած ձորերի մէջ, խառնվումեն միմեանց հետ, աճելով միանումեն, վեր են ելանում դէպ ի օդերը այնպիսի բարձրութեամբ, որ վաստակեցնում մարդու հայեացքը։ Վայրենի ողկուզենիքը (խաղողի ծառեր), ամերիկային յասմիննները, դառնաբոյս վարոնցները, փաթաթվումեն միմեանց այս ծառերի ոտքում, բարձրանում են նոցա ոստերի վերայ, դէպ ի վեր են սողում մինչև ճիւղերի կատարը, արձակվումեն սօսիցը դէպ ի կակաչածառը, կակաչածառից դէպ ի վարդածաղիկ բարտին, ձևակերպելով հազարաւոր գոգախորշեր, հազարաւոր կամարներ, հազարաւոր սիւնազարդ սրահներ։ Այս պատատուկ բուսականքը, շատ անգամ ծառից ծառ ոլորվելով անցանումեն գետերի բաղուկների վերայից, և սոցա վերայ յօրինումեն ծաղկաղարդ կամուրջներ։ Այս խիտ անտառների միջից մագնոլիայի ծառը բարձրացնում է իւր անշարժ կոնոնաձև պլուխը. նա, Թագազարդուած իւր լայն սպիտակ վարդերով, հրամայում է բոլոր անտառին և չունի ոչ մի այլ հակառակորդ, բաց ի արմաւենուց, որ նորա մօտին ճօճճեցնում է իւր կանաչեղէն հոլմահարները։

Ընհամար բաղմութիւն շնչաւորների, որ Արարչի ձեռքը տեղաւորել է այս անապատներում, տարածումեն այն տեղ հիացումն և կեանք։ Օվասոստանի ծայրից դու նկատում ես արջեր որ խաղողից արբեցած, դողդոջում են կնձնի ծառերի ճիւղերի վերայ. կանադեան եղջերուներ լուացվումեն ըճերի մէջ. սև սկիւռներ խաղում են տերևների թանձրախառութեան մէջ. ծաղրածու թռչուններ, աղաւնիք կոլումբիայի, ճնճղուկների մեծութեամբ ցած են իջանում կանաչավայրի վերայ, որ կարմրացած էր եղդներից (խմորուկներից)։ կանաչափետուր թռչնակներ դեղին գլուխներով, ծիրանագոյն կաչաղակներ, հրաշէկ կարդինալներ շրջապատելով մագլցումեն դէպ ի մրտենիքի ծայրը. զարդարուն ծիտեր շողշողումեն գլորիդայի յասմինի վերայ և հաւորսական օձեր, կախուած ծառերի կատարից, սուլումեն, ճօճալով իրենք պատատուկ լինայք։

Ինչ ամենայն ինչ լուսաթիւն և գազար է սամանեան գաշտավայրերում, գետի միւս կողմումը. դորա հակառակ, այս տեղ ամենայն ինչ շարժողութիւն է և շառաչիւն. կտուցների հարուածք կաղինների բունի վերայ, ոտնակոխութիւնը շնչաւորների որ քայլումեն, ուտումեն կամ ջարդումեն իրենց ատամների մէջ պտուղների ընկոյզները, ալիքների խախոջմունք, թռչյ մունչիւնք, անձայն բառանչիւնք, մեղմ մնչիւնք լցուցանումեն այս առանձնական տեղերը մի քնքուշ և վայրենի գաշնակութեամբ։ Բայց երբ որ մի հանդարտ զովացուցիչ հոմ փչումէ կենդանացնելով այս անապատը, տարուբերելով այս շարժուն մարմինքը, խառնելով միմեանց հետ այս սպիտակ, երկնակապոյտ, կանաչ ու կարմիր նիւթերը, շիոթելով բոլոր գոյները, միաւորելով բոլոր շառաչիւնքը. այնուհետև այնպիսի ձայներ արձակվումեն անտառների խորքից, այնպիսի բաներ հանդիպումեն մարդու աչքին,

որ անօգուտ կը լինէր ինձ փորձ փորձել նկարագրելու նորանց այն մարդերի համար, որ երբէք շրջած չէն ի մէջ այս սկզբնական դաշտերի բնութեան։

Օ՛Կինի Մեշասեբէ գետի յայտնագործութիւնը Հայր Մարքետի և ապաքաղդ Լա Սալլի ձեռքով, առաջին Ֆրանսիացիք որ տուն ու տեղ հաստատեցին Իլլըքսի գաւառի և Նոր-Օրլէանի մէջ, դաշնաւորութիւն կապեցին Նաչէզեանց հետ, որ մի ամերիկային ազգ է, որի կարողութիւնը երկիւղալից էր այս սահմաններում։ Կուիներ և նախանձաւորութիւնք արիւնով ապականեցին յետոյ այս հիւրասէր աշխարհը։ Այս վայրենաբնակների մէջ կար մի ծերունի, Շաբտաս անուն, որ իւր հասակով, իւր խնամութեամբ և իւր գիտութեամբ կեանքի բաների մէջ, էր նահապետը և սերը այս անապատների։ Ինչպէս բոլոր մարդիկը, նա գնել էր առաքինութիւնը անբաղդութեամբ։ Ոչ թէ միայն նոր աշխարհի անտառները լցուած էին նորա անբաղդութենների յիշատակով, այլև նորան պատրաստուած էին անբաղդութիւնք Ֆրանսիական ծովեզերեայքի վերայ։ Նա մի անգութ անիրաւութեամբ դատապարտուած դէպ ի մշակութիւն նաւերի վերայ Մարսիլիայում, բայց յետոյ ազատուելով և Լուդովիկոս տասն և չորսերորդին յանդիման կացուցած, խօսակից էր եղած այն դարու ականաւոր տղամարդերի հետ և մանաւանդ էր գտանուել Վերսալի տօնախմբութենների, ունկնդիր էր եղած Բասինի ողբերգութենների, Բօսիւետի դամբանական (թաղման) ճառերին. մի խօսքով, այդ վայրենաբնակը տեսել էր և քննել էր ընկերական կեանքը իւր փառահեղութեան ամենավերին աստիճանի վերայ։

Շաբտասը, սկսեալ շատ տարիներից, վերադառնալով իւր հայրենիքի ծոցը, վայելումէր հանգիստ։ Այնու ամենայնիւ երկնային տեսչութիւնը և այս շնորհը վաճառումէր նորան թանգ գնով. ծերունին կուրացել էր։ Մի պատանի դուստր առաջնորդումէր նորան դէպ ի բլուրները Մեշասեբէի, ինչպէս մի ժամանակ Անտիգոնէն առաջնորդումէր Էդիպոսին Կիւթերոն սարի վերայ, կամ թէ որպէս Մալվինան ձեռքից բռնած մանր էր ածում Օսիանին, Մորվենի ապառաժ սարերի վերայ։

Շաբտասը թէև շատ անիրաւութենների տարել էր Ֆրանսիացոց ձեռքից, այնու ամենայնիւ սիրումէր նորանց։ Նա միշտ մտաբերումէր Ֆենելոնին, որի հիւրասիրութիւնը վայելել էր, և ցանկանումէր կարողանալ որ և իցէ շնորհ ցուցանել այս առաքինի տղամարդի հայրենակիցներին։ Մի պատահար յաջող դիպուած պատահեցաւ նորան։ 1725 թուականին, մի Ֆրանսիացի, Բենէ անուն, հոգեկան խռովութենններից, և անբաղդութենններից ստիպուած, եկաւ Լուիզիանա։ Նա Մեշասեբէ գետի վերայ դէպ ի վեր նաւելով հասաւ Նաչէզեանց սահմանին, և խնդրեց, որ ընդունեն նորան որպէս պատերազմող այս ազգի համար։ Շաբտասը հարցուփորձ առնելով սորանից և գտանելով նորան անպողպատ իւր մտադրութեան մէջ, որդեգրեց նորան, և տուեց նորան իւրև ամուսին մի ամերիկացի կին, Սելիւտա անուն

նով։ Ա՛յս առումովթէնից մի փոքր յետոյ, վայրենաբնակ ժողովուրդը պատրաստուեցաւ կուռքերի (կաստօրների) որս գնալու։

Հ՚աքտասը, թէպետև կոյր, այնու ամենայնիւ Սաշեմների (ալևորների) խորհրդակցութեամբ ընտրուեցաւ առաջնորդ այս արշաւանքիս, այն միտքով որ ամերիկեան աղդերը ունէին դէպ ի նա։ Ա՛յնուհետև սկսան աղօթք և ծոմապահութիւնք. կախարդները պատմեցին երազները, հարցաքննուեցան Մանիթոների կարծիքը. զոհուեցին թռչուններ, այրուեցան ամերիկեան եղջերուի լեզուակապեր և քննուեցան, արդեօք նոքա ճայթեցնելու վրայ մէջ, պաշտպան ոգիների կամքը յայտնի կացուցանելու համար. վերջապէս ուղևորուեցան, երբ որ կերել էին նուիրական շունը։ Բնիկն կցորդ է այս ընկերութեանը։ Գետի հակառակ հոսանքի օգնականութեամբ նաւակները բարձրանում են դէպ ի վեր նաւելով Մեշասեբէն և ներս են մտանում Օհիո լճի գոգի մէջ։ Ժամանակը աշուն է։ Կենթուկիայի փառահեղ անապատները բացուեցան մանուկ Ֆրանկլինացու հիացած աչքի առաջև։ Մի գիշեր, լուսնի վայելքութեան տակ, այն միջոցին, երբ նաւէզեանքը քնած էին իւրեանց նաւակների յատակի վերայ, և ամերիկեան նաւերը բարձրացնելով իւրեանց, անասուններուն մորթից շինած առագաստները, վաղուանին մի մեզմ ծովային հողմի փչմամբ, բնիկն ճնալով Շաքտասի հետ միասնակ, խնդրեցին նորանից պատմել իւր գլխի անցքը։ Ալևորը յանձնառու է լինում լսուցանել նորա խնդիրը, և նստած նորա հետ նաւակի յետնակողմում, սկսանում իւր պատմութիւնը այսպէս.

ՈՐՍՈՐԴՆԵՐԸ.

«Ա՛յս մի սակաւագիւտ բերուած է, իմ սիրելի որդի, որ մեզ հանդիպեցրել է միմեանց։ Ես տեսանում եմ քո մէջ մի շինաքաղաքացի մարդ, որ իւր անձը ձգել է վայրենաբնակ ազգի մէջ. դու տեսանում ես իմ մէջ մի վայրենաբնակ մարդ, որ այն մեծ ոգին (չգիտեմ թէ ինչ խորհրդով) կամեցել է շինաքաղաքացի առնել։ Մեք երկուքս ներս մտանելով կեանքի ասպարէզի մէջ, երկու հակառակ ծայրերից, դու եկած ես հանդստանալու իմ տեղումն, և ես գնացած էի նստելու քո տեղումը. ուրեմն, մեք պիտոյ է ունեցած լինինք մի ամենևին տարբեր հայեացք աշխարհիս բաների վերայ։ Ո՛րը մեզանից, դու թէ ես, աւելի օգուտ կամ վնաս է տացել, այսպէս փոփոխելով իւր կացութիւնը. այս գիտելի է պաշտպան ոգիներին, որոնց ամենասակաւ գիտութիւնը ունի աւելի խնամտութիւն քան թէ բոլոր մարդիկը միասնդամայն։

Վաղոյ ծաղկազարդեան լուսնին (մայիս ամսում) կը լինին եօթն անդամ տասն ձիւնամիջոցք և դոցա վերայ յաւելացրած երեք ձիւնամիջոցք (այսինքն 73 տարի), որ իմ մայրս աշխարհ էր բերել ինձ Մեշասեբէի եզերքի վերայ։ Սպանիացիք դեռ ևս նոր էին բնակութիւնք հաստատել Պենսակօ-

լայի ծովափոգումը, բայց դու ևս ոչ մի սպիտակամորթ (եւրոպացի) ընա-կում չէր Լուիզիանայի մէջ։ Դժուար թէ ծառի տերևները տան և ևօթն անգամ թաւիուած էին, երբ որ ես իմ հօր, Ուէթալիսի պատերազմողի հետ, դուրս գնացի ընդդէմ Մուսկօգուլժեանց, որ մի հզօր ազգ է Ֆլօրիդայի մէջ։ Մեք միաւորվեցանք մեր դաշնաւոր Սպանիացոց հետ և կռիւը բացուեցաւ Մօբիլ գետի բազուկներից մինի վերայ։ Արևմկոյն (աստուածը պատերազմի) և Մանիտօքը չպարգևեցին մեզ յաղթոյն թիւն։ Թշնամիքը յաղթող հան-դիսացան, իմ հայրս կորցրեց իւր կեանքը, ես վերաւորուեցայ երկու ան-գամ, պաշտպանելով նորան. ո՜հ, ինչո՞ւ այն միջոցին չյած չէիցայ ես դէպ ի ոգիների աշխարհը (այսինքն դէպ ի գերեզման). ես աղատուած կը լինէի այն ձախորդութիւններից որ մնումէին ինձ աշխարհիս վերայ։ Այսպէս եղաւ պաշտպան հոգիների տնօրէնութիւնը. փախստականքը քարշեցին, տարան ինձ դէպ ի Սուրբ Օգոստինոսը։

Այս քաղաքի մէջ, որ նորոգ կառուցած էր Սպանիացոց ձեռքով, եր-կիւղ կար, մի գուցէ խլէին և ուղարկէին ինձ որպէս մշակ Մէքսիկոյի հան-քերի մէջ, և ահա մի ծերունի կաստիլացի, Լոպէց անուն, գթալով իմ տղայութեան վերայ, շնորհեց ինձ պատսպարան և յանդիման կացուց իւր մի հատ քուերը, որի հետ կենակից էր, լինելով անամուսին։

Այս երկոքը յանձն առան մի քաղցրագութ մարդասիրութիւն դէպ ի ինձ, նորա դաստիարակեցին ինձ մեծ հոգատարձութեամբ և տուեցին ինձ ամենայն տեսակ ուսուցիչք. բայց, երբ որ երեսուն լուսանակիցք անցած էին Սուրբ Օգոստինոսում, տաղտկացաւ սիրտս քաղաքային կեանքից. ես հալա-մաշ էի լինում օրէ օր. երբեմն մնումէի ես անշարժ ամրողջ ժամեր, աչքս բևեռած հեռաւոր անտառների կատարի վերայ. երբեմն գտանումէին ինձ նստած մի գետի եզրում, տխրութեամբ նկատելով նորա հոսանքը։ Ես պատ-կերացնումէի մեքով անտառները, որոնց միջով այս հեղեղը անց էր կացել, և իմ հոգիս ամենևին պատկանումէր անապատներին։

Ձկարողանալով աւելի դիմանալ իմ բաղձանքին վերադառնալու դէպ ի անապատը, մի առաւօտ դիմեցի Լոպեցի մօտ, հագած իմ վայրենական հանդերձքը, մի ձեռնումն բռնած իմ աղեղը և նետերս, միւս ձեռնումս իմ եւրոպական հանդերձքս։ Ես սորանց յետ տուեցի իմ աղնիւ հոգաբարձուին, ընկնելով նորա ոտքը, և թաւիելով արտասուքի հեղեղներ։ Ես հայհոյեցի իմ անձը, ես պարտաւորեցի ինձ որպէս ապերախտ. «Ա՜յնու ամենայնիւ, ասացի ես նորան, ով իմ հայր, դու ինքդ տեսանումես, որ ես կը մեռանիմ, եթէ չվերադառնամ դէպ ի իմ ինդիանական կեանքը»։

Լոպեցը, զարմացքի մէջ ընկած, կամենումէր հրաժարեցնել ինձ իմ դիտաւորութենից։ Նա նկարագրեց ինձ այն վտանգները, որ ես պատրաս-տումէի ինձ, ենթարկելով իմ անձը վերստին ընկնելու Մուսկօգուլժեանց ձեռքը։ Բայց տեսանելով, որ ես հաւան էի յանձն առնուլ ամենայն պա-

տահար, արտասուելով և ինձ գրկախառնելով, ձայն արձակեց նա. «Գնա, դու որդիդ բնութեան, վերստին ստացիր այդ այրական ազատութիւնը, որ Լոպեցը երբեք չկամի յափշտակել քեզանից։ Եթէ ես ինքս լինէի աւելի պատանի, ուղեկից կը լինէի քեզ դէպ ի անապատը (ուր ես ունեմ նոյնպէս քաղցր յիշատակներ) և վերստին կը դնէի քեզ քո մօր գրկի մէջ։ Երբ որ դու կը լինիս անտառների մէջ, միտդ բեր այս ալեւոր Սպանիացին որ ցուցել է քեզ հիւրասիրութիւն, և, քո սիրտը շարժելու սիրով դէպ ի քո ընկերը, յիշիր որ առաջին փորձը որ դու արել ես մարդկային սրտի մասին, ամենաւին բարեխօս է դորա համար»։ Լոպեցը վերջացրեց խօսքը մի աղօթքով դէպ ի քրիստոնեաների Աստուածը, որի պաշտօնը յանձն առնուլ հրաժարուած էի ես, և մեք բաժանվեցանք միմեանցից հառաչանքով։

Իմ ապերախտութեան պատիժը յետ չձգաց։ Իմ անփորձութեանից ճանապարհից մոլորվելով ընկայ անտառների մէջ և ըմբռնվեցայ մի Մուսկօգուլժեան և Սիմինօլեան բաժնի ձեռք, ինչպէս Լոպեցը յառաջուց ասել էր ինձ։ Ինձ ճանաչելին որպէս Նաչէզեան մարդ, նկատելով իմ հագուստը և փետուրները որով զարդարած էր գլուխս։ Կապեցին ինձ, բայց թուլապէս, խնայելով մանկութեանս։ Սիմոզան առաջնորդը այս հասարակութեան, կամեցաւ խնամել իմ անունը. «Իմ անունս Շաբտաս է, որդի Ութալոսի, որդու Միսկուի, որ վերացուցել են աւելի քան թէ հարիւր հնարազարդ գլուխներ մեր սկօգուլժեան քաջազունների թիկունքից»։ Սիմոզանը ասաց ինձ. «Ով Շաբտաս, որդի Միսկուի, ուրախ եղիր, դու կ'այրվիս մեծ գիւղաքաղաքում»։ Ես պատասխանեցի. «Երջանիկ եմ, և կը բարձրացնեմ իմ մահուս երգը»։

Թէպէտ և կալանաւոր էի ես, բայց չկարողացայ առաջին օրումը յետ պահել մեծարական պատիւս իմ թշնամիներից։ Մուսկօգուլժեան մարդը և մանաւանդ նորա դաշնաւոր Սիմինօլեանը շնորհէ ուրախասիրութիւն, սէր և բաւականութիւն։ Նորա վարքը թեթև է, նորա ընդունելութիւնը բաց ու պայծառ։ Նա խօսում շատ և աջողակութեամբ. նորա բարբառը դաշնակաւոր է և հնչուն։ Այդ իսկ տարիքը կարող չեն Սաչեմներից խլել այս ուրախասիրտ պարզութիւնը. ինչպէս ալեւոր թուչունները մեր անտառների, նոքա դեռ ես խառնում են իրենց պատառ երգերը իրենց մանուկ զաւակների զուարթ ձայների հետ։

Կանայքը որ ուղեկից էին այս հասարակութեանը, ցուցանում էին մի քնքուշ կարեկցութիւն իմ մանկութեանը և մի սիրախառն հարցասիրութիւն։ Նորա ամենայն տեսակ հարց ու խնդիր էին առնում ինձանից իմ մօր, իմ կեանքի առաջին տարիների մասին. նորա կամենում էին իմանալ, արդեօք իմ մանուպատ օրօրոցս կախ էին տուած սիներդամոների ծաղկած ճիւղերի վերայ, արդեօք մեղմ հողմերը ճօճեցուցել էին ինձ փոքրիկ թուչունների բունի մօտակայքում։ Աւելի հաղարաւ որ այլ հարցմունք կային իմ սրտիս դգա-

ցողութեան մասին. նոքա հարցանուէին ինձանից, արդեօք տեսած էի երալներիս մէջ մի եղնորթ, և արդեօք խորհրդական անտառի ծառերը տուած էին ինձ խրատ սիրելու։ Ես անմեղ համարձակութեամբ պատասխանում էի մայրերին, աղջկներին և ամուսնաւոր կանանց։ Ես ասում էի նոցա. «Դուք ցերեկի ղարդն էք, և գիշերը սիրում ձեզ որպէս երկնային ցօղը։ Մարդը յառաջանում ձեր արգանտից, որ կախուի ձեր ստինքից և բերանից։ Դուք տեղեակ էք այն կախարդական խօսքերին, որ քնեցնում են ըոլոր ցաւերը։ Ահա թէ ինչ է ասել ինձ այն կինը որ ինձ աշխարհ բերեց, որ և ինձ այսօրհետև տեսանելու չէ։ Այլև նա ասել է ինձ, թէ օրիորդները էին խորհրդաւոր ծաղկներ որ հանդիպում են մեղ առանձնական տեղերում»։

Ես գովասանութիւնքը մեծ հաճութիւն էին պատրաստում կանանցը. նոքա թափում էին իմ վերայ ամենայն տեսակ ընծաներ. նոքա բերում էին ընկուզի կաթի սեր, շաքար սիւնգամոխ, սմինդրի հաց (ճաթ), ապուխտ արջի մսից, կուղպի մորթեր, խեցեմորթեր ինձ զարդարելու համար և մամռաբոյսեր իմ հանդստարանի համար։ Նոքա երդում էին, ծիծաղում էին իմ հետ և յետոյ սկսում էին արտասուք թափել, մոածելով, որ ես պիտի այրուիմ։

Մի գիշեր, երբ որ Մուսկօգուլժեանքը իւրեանց բանակը հաստատել էին մի անտառի եզրում, ես նստած էի պոռերոպի ւոմի մօտ, այն որսորդի հետ, որ կարգած էր իմ վերայ պահապան։ Ցանկարծ ղգացի ես մի հանպերձի շառաչիւն մօտի վերայ, և մի կին կիսով չափ քօղաւորուած եկաւ և նստաւ մօտակայքում։ Արտասուքը վազում էին նորա թերթերուկներից. կրակի լուսատուութեամբ մի փոքրիկ խաչելութեան պատկեր փայլում էր նորա կուրծքի վերայ։ Նա զուգապատշաճ գեղեցիկ էր. նորա երեսի վերայ նկատվում էր մի անպատմելի նշոյլ առաքինութեան և ախտի, որի գրաւիչ զօրութիւնը անընդդիմանալի էր։ Նա լծորդում էր սորա հետ աւելի քնքուշ քաղցրութիւնք. մի գերօրինակ ղգացողականութիւն, միաւորուած խորին տխրամտութեան հետ, շնչում էր նորա հայեացքի մէջ. նորա ժպտումը էր երկնաքաղաքացի։

Ես կարծեցի թէ սա էր վերջին սէրս կեանքում, մի կոյս որ ուղարկում էին պատերազմական կալանաւորի մօտ, նորա պերեզմանը վայելչացնելու համար։ Այսպէս հաւատացած լինելով, ես ասացի նորան թոթովելով և մի խոստովանութեամբ, որ այնու ամենայնիւ չէր յառաջանում երկիւղից, որ պիտի այրուէի ես փայտակոյտի վերայ. «Ով կոյս, դու արժանի ես առաջին սիրոյն, և չես ստեղծուած վերջին սիրոյ համար։ Շարժմունքը մի սրտի, որ պիտի շուտով վերջանայ զարկելուց, չունին յարմարութիւն քո սրտի շարժմունքի հետ. ինչպէս կարելի էր խառնել մահը կեանքի հետ. դու տալու էիր ինձ պատճառ աւելի ցաւելու կեանքի վերայ։ Թող մի այլ որ լինի աւելի երջա-

նիկ քան թէ ես, և թող երկար դրկանաունութիւնք միաւորեն պատատուկը կաղնու հետ։

Մանուկ աղջիկը ասաց ինձ այնուհետև. «Ես չեմ վերջն տէր էրէ։ Քրիստոնեայ ես դու»։ Ես պատասխանեցի թէ երբէք ուրացած չեմ իմ երդմնի պաշտպանող ոգիքը։ Ինդիանացի կինը արեց մի ակամայ շարժողութիւն։ Նա ասաց ինձ. «Ես արտասվում եմ քո վերայ որպէս մի ամբարիշտ կռապաշտի վերայ։ Իմ մայրս ինձ չինել է քրիստոնեայ. իմ անունս Աթալա է, դուստր Սիմաղանի ոսկի ապարանջանով, և մեծաւորի այս հասարակութեանս։ Մենք ուղևորվում ենք դէպ ի Ապալաշուքլա, ուր պրուելու ես դու»։ Այս խօսքից յետոյ Աթալան վեր կացաւ տեղից և հեռացաւ։

Այս տեղ Շաքտասը սոխպուեցաւ ընդհատել (կարել) իւր պատմութիւնը. անթիւ ու անհամար յիշատակներ զարթեցան նորա հոգու մէջ. նորա շիջած աչքերը հեղհեղեցին արտասուքով նորա գունաթափ թուշերը. զոր օրինակ երկու աղբիւրք, երկրի խորին գիշերի մէջ ծածկած, յայտնվում են այն ջրերով որ նորա թորեցնում ապառաժ սարերի միջով։

«Իմ որդի, խօսքը վեր կալաւ նա. դու տեսանում ես, որ Շաքտասը շատ սակաւ իմաստուն է, թէև իւր իմաստութեամբ հռչակուած էր։ Ա՜հ, իմ սիրելի մանուկ, մարդիկը այլևս կարող չեին տեսանել, բայց նորա դեռ ևս կարող են արտասուել։ Շատ օրեր անցան. Սաշեմի աղջիկը ամենայն օր վերադառնում էր ինձ տեսանելու։ Քունը փախել էր աչքերիցս, և Աթալան տպաւորուած էր իմ սրտի մէջ որպէս իմ Հայրենական գերեզմանի յիշատակը»։

Տասն և եօթներորդ օրը մեր ուղևորութեան, մօտ այն ժամանակին, երբ որ առաւօտեայ ճանճը դուրս է գալիս ջրերից, մենք Ալաշուա անուն մեծ դաշտաւայրի մէջ։ Նա շրջապատած է լերներով, որ միմեանց միսի քամակը մոռանելով և բարձրանալով մինչև ամպերը, կրումեն իւրեանց վերայ անտառներ, աստիճանաբար դրած նոցա վերայ կօպալմեան ծառեր, կիտրոնենիք (լիմոնածառք), մանիօլիայք և քարապինդ կաղնիք։ Մեծաւորը ձայն արձակելով նշան տուեց թէ տեղ էին հասել. և ժողովուրդը իջևանեցաւ այն բնական ջրհորների ափունքը, որ այնքան հռչակաւոր են Ֆլորիդայի մէջ։ Ես կապած էի մի ծառի ոտքի. մի պատերազմող անհամբերութեամբ հակուեցաւ իմ մօտ։ Հազիւ թէ մի քանի րոպէ անցուցել էի այս տեղ, և ահա երեւեցաւ Աթալան աղբիւրի ամպարաձոր ծառերի տակ։ «Ո՛րսորդ, ասաց նա մուսկօգուլգեան քաջազուներին, եթէ կամիս դու ընկնել սկիւռի քամակից, ես կը պահեմ քո կալանաւորը»։ Պատերազմողը վեր վեր թռաւ ուրախութենից, լսելով այս խօսքը մեծաւորի աղջկայ բերանից. նա յարձակվեցաւ բլրակի կատարից և շտապեց դէպ ի դաշտաւայրը։

Զարմանք հակառակաբանութիւն մարդկային սրտի. ես, որ այնքան ցանկացած էի իմ գաղտնիքը ասել այն կին մարդուն որ ես սիրում էի որպէս արևը, այժմ կապած ու առուած, կարծեմ թէ աւելի նախապատիւ համա-

բած կը լինէի ձգել իմ անձը աղբիւրի կրօհոդիլոսների առաջև, քան թէ տե-
սանել ինձ այսպէս առանձին, Ամալեայի հետ։ Անապատի աղջիկը նոյնպէս
վըրդոված էր, ինչպէս նորա կալանաւորը. մեք գտանվուէինք մի խորին լուռ-
թեան մէջ. սիրոյ ոգիքը կապել էին մեր լեզուքը։ Վերջապէս Ամալան, աշ-
խատութիւն տալով իւրեան, խօսեց այսպէս. «Պատերազմող, քո կապանքը
շատ թոյլ են. դու կարող ես շատ հեշտ ազատել քո անձը»։ Այս խօսքը
լսելով, համարձակութիւն ստացաւ լեզուս, ես պատասխանեցի. «Մի՛ թէ
թոյլ են իմ կապանքը, ով կին...» Ես չգիտեի թէ ինչպէս աւարտեմ խօսքս։
Ամալան մի քանի րոպէ կարկամվեցաւ, յետոյ ասաց նա. «Փրկիր քո անձը». և նա արձակեց ինձ ծառի բունից։ Ես վեր կացայ չուանը և դրեցի օտարական աղջկայ ձեռքի մէջ, ստիպելով նորա գեղեցիկ մատները ամուր բռնել իմ շղթան»։ Վեր կացէք, ձայն տուեցի։ — Դու խելագար ես, ասաց Ամալան չափազանց ձայնով. Թշուառական դու, մի՛ թէ չգիտես, որ դու պա-
րտևըր ես։ Ինչ ես կամենում դու. արդեօք պիտի՞ն դու, որ ես մի ահա-
ցուցիչ Սաչեմի դաստր եմ։ — Կար մի ժամանակ, կրկնեցի ես արտասուքով, որ ինձ նոյնպէս կուզքի մորթու մէջ կրել է իմ մայրը ուսերի վերայ։ Իմ հայրս ունէր նոյնպէս մի գեղեցիկ խրճիթ, և նորա սկիւռները ջուր էին խմում հա-
զար հեղեղատներից. բայց ես թափառումեմ այժմ անտուն և անօթևան։ Երբ որ ես մեռած էի, ոչ մի բարեկամ չէ ծածկելու իմ դիակը մի փոքր խո-
տով, նորան պաշտպանելու ճանճերի երեսից։ Մի անբաղդ օտարականի դիակ ոչ ոքի հոգս չէ։

Այս խօսքերը շարժեցին Ամալայի դութը. նորա արտասուքը թո-
րեցան աղբիւրի մէջ։ «Ո՜հ, կրկին խօսքը վեր կացայ ես զուարթութեամբ, միայն թէ քո սիրտը խօսէր այնպէս, ինչպէս իմն։ Մի՛ թէ համարձակ չէր անապատը. մի՛ թէ անտառները չունին ծածուկ խորքեր պատսպարելու մեզ։ Մի՛ թէ, երջանիկ լինելու համար, խրճիթների որդիքը կարօտ էին այնքան շատ բաների։ Ով աղջիկ դու, աւելի գեղեցիկ, քան թէ առաջին երազը սի-
րոյ. ով իմ շատ սիրելի, արի ուղեկից եղիր ինձ»։ Այսպէս էին իմ խօս-
քերս։ Ամալան պատասխանեց ինձ քնքուշ ձայնով. «Իմ մանուկ բարե-
կամ, դու ուսել ես սպիտակամորթ մարդկերի լեզուախօսութիւնը. հեշտ է խաբել մի ինդիանացի կին։ — Բայց դու, ձայն արձակեցի ես, ասումես ինձ քո մանուկ բարեկամ. ո՜հ, եթէ մի թշուառ ստրուկ... Ապա ուրեմն, ա-
սաց նա, թևքվելով իմ վերայ, դու մի թշուառ ստրուկ...» Ես կրկնեցի ջերմութեամբ. «Թող մի հանգոյց ստուգութիւն տայ քո հաւատարմա-
թեանը»։ Ամալան կատարեց իմ խնդիրը։ Զոր օրինակ մի եղնորթ երե-
ւումեր կախուած վարդակարմիր լանայքի ծաղիկներից որ իւր քնքուշ լեզ-
ուով բռնած էր սարի գառի վերի վերայ, նոյնպէս մնացի ես կախուած իմ շատ սիրածի շրթունքից։

Ընտրյալ, իմ սիրելի որդեակ, ցաւը մեծ սահմանակից է քաղցրութեանը։ Ո՛վ կարող կը լինէր մտածել, թէ այն րոպէն, երբ որ Ադաման տալիս էր ինձ իւր սիրոյ առաջին առհաւատչեան, էր մի և նոյնը, որով նա պիտի քայքայէր իմ յոյսերը։ Մաղերդ սպիտակել են, ով Շաբտաս. բայց ինչպէս մեծ էր քո զարմանքը, երբ որ Սաշևմի դուստրը լսերանից դուրս հանից այս խօսքերս. «Գնդեցիկ կալանաւոր դու, ես անմտաբար տեղիք տուեցի քո բաղձանքին, բայց դեպ ի ուր պիտի տանի մեզ այս ախտը. իմ կրօնս յանիսեան բաժանումէ ինձ քեզանից...ով իմ մայր, ինչ ես արել դու...» Ադաման լսեց յանկարծ և չգիտեմ թէ ինչ գաղտնիք, որ մեծ էր դուրս էր թռչելու նորա շրթունքից, յետ պահեց։ Նորա խօսքերը ընկղմեցին ինձ յուսահատութեան մէջ։ «Ապա ուրեմն, ձայն տուեցի ես, և ես կը լինիմ այնպէս անգութ, ինչպէս դու. ես չկամիմ փախչել. դու կը տեսանես ինձ կրակի փայտակոյտի մէջ, կը լսես իմ մարմնի հեծեծանքը և սիրտդ կը լցուի ուրախութեամբ»։ Ադաման վեր կալաւ իմ ձեռքը և դրեց իւր երկու ձեռքի մէջ. «Թշուառ երիտասարդ կուսապաշտ, ձայն արձակեց նա, դու արդարև խղճալի ես ինձ. ուրեմն, դու կամիս, որ ես արտասուելով սպառեմ սիրտս, Ինչպէս ցաւելի, որ ես կարող չեմ փախչել քո հետ։ Անբաղդ էր քո մօր արգանդը, ով Ադամա. ինչո՞ւ դու չես ձգում քո անձը աղբիւրի կրոկոդիլոսի առաջև։

Այն խակ րոպէիս, կրոկոդիլոսքը, արևամուտը մօտենալով, սկսումէին հնչեցնել իւրեանց գոռացքը։ Ադաման ասաց ինձ. «Արի, հեռանանք այս տեղերից։ Ես քարշեցի տարայ Սիմաղանի աղջիկը դեպ ի ոսքը բլուրների որ կերպասատուումէին կանաչազարդ դոգատուրութիւնք, յառաջ մղելով իւրեանց սարսանդները դաշտավայրի մէջ։ Տիրումէր մի ընդհանուր խաղաղութիւն և փառահեղութիւն անապատի մէջ։ Արագիլը աղաղակումէր իւր բունի մէջ, անտառները թնդումէին լրտամարգիների միատեակ ձայնարկութենից, էգ թռչնակների սուլելուց, ուռուցատուր եղերի բառանչիւնից և սիմինօլեան մատակների խրխնջիւնից։

Մեր ղբօսանքը էր գրեթէ անիսօ. ես քայլումէի Ադամայի կողքին. նա բռնած էր ծայրը չուանի որ ես ստիպել էի նորան վեր առնուլ։ Երբեմն թափուռմէինք մէջ արտասուք, երբեմն աշխատումէինք ժպտիլ։ Մեր հայացքը երբեմն դեպ ի երկինք բարձրացուցած, երբեմն դեպ ի երկիր ըևեռած, մեր ականջը, թռչունների տաղատացութեանը ուշադիր, նշանացի առնելով դեպ ի արևամուտը, քնքշութեամբ սեղմելով միմեանց ձեռք, կուրծքը փոխ առ փոխ բարախելով, փոխ առ փոխ հանգարտ, ժամանակ առ ժամանակ մեղմութեամբ կրկնելով անուններս Շաբտաս և Ադամա... ո՜հ առաջին ղբօսանք սիրոյ, պիտոյ է քո յիշատակը շատ ղօրաւոր լինի, որովհետև այնքան թշուառութեան տարիներից յետոյ դու տակաւին շարժումես ալևոր Շաբտասի սիրտը։

Ի՛նչպէս անհասկանալի են իւրեանց ախտերով տանջուած մահկանացուքը։ Ես հրաժարուել էի աշնուամիտ Լոպեցից, ես իմ գլուխը դրել էի բոլոր վտանգների տակ, ազատ լինելու համար. մի րոպէի մէջ մի կնոջ հաւացք փոփոխել էր իմ ախորժանքը, իմ դիտաւորութիւնքը, իմ մտածութիւնքը։ Մոռանալով իմ հայրենիքը, իմ մայրը, իմ խրճիթը և այն ահարկու մահը որ մնում էր ինձ, ես դարձել էի սառնասիրտ դէպ ի ամենայն բան որ չէր Աթալա։ Ջունելով կարողութիւն բարձրանալու դէպ ի այրական բանականութիւնը, ես վերստին ընկած էի յանկարծ մի տեսակ երեխայութեան մէջ. և անփոյթ առնելով ազատել իմ անձը այն թշուառութիւններից որ սպասում էին ինձ, ես համարեա թէ կարօտ էի օտարի հոգաբարձութեան, թէ քուն վայելելու և թէ կերակրուելու համար։

Ուրեմն զուր և անօգուտ ջանք էր, որ Աթալան զկնի մեր թափառականութեան սալանեան դաշտավայրի մէջ, ընկնելով իմ ծնկների վերայ, յորդորեց ինձ կրկին հրաժարուիլ իւրեանից։ Ես հաւատացուցի նորան, որ ես միայնակ վերադառնալու էի դէպ ի դաշտը, եթէ չկամէր նա կրկին կապել ինձ իմ ծառի ոտքին։ Նա ստիպուած էր հաճեյնել ինձ, յուսալով թէ մի այլ անգամ կը համոզէ ինձ։

Ո՛ աղուեան օրին, որ վճռելու և կնքելու էր իմ կեանքի վերջը, ժողովուրդը դադար առաւ մի ձորի մէջ, ոչ հեռի Գուսկովլիլայից, որ Սիմինօլեանց մայրաքաղաքն է։ Այս Ինդիանացիք, Մուսկոգուլժեանց հետ միաւորուած, կազմում են նոցա հետ մի դաշնաւորութիւն Գրեկեանց անունով։ Արմաւենիքի աշխարհի աղջիկը եկաւ ինձ այցելութիւն մէջ գիշերով. նա տարաւ ինձ դէպ ի մի մեծ եղէնատունկ անտառ և նորոգեց իւր խնդիրը, որ յորդորէ ինձ դէպ ի փախուստ։ Առանց պատասխանելու նորան, ես վեր կացայ նորա ձեռը իմ ձեռի մէջ և ստիպեցի այս ծարաւի եղնորիքը թափառել իմ հետ անտառի մէջ։ Գիշերը պատուական էր։ Օդերի պաշտպան ոգին ցնծում էր իւր մեպ կապոյտ մնջերը, եղևիններուն հոտով լիցուատորուած, և բուրում էր մի թոյլ ամպարահոտութիւն որ շնչում էին կրոկոդիլոսները գետերի տամարինեան ծառերի տակ հանգստացած։ Լուսինը միայնում էր անարատ կապտագոյն երկնակամարի մէջ տեղում և նորա մարգարտեղէն գորշագոյն լոյսը իջանում էր անտառների անորոշ կատարի վերայ։ Ոչ մի աղմուկ լսելի չէր, բաց ի մի անասելի, բացակայ դաշնակութիւնից որ թագաւորում էր անտառների խորքի մէջ. դու ասելու էիր, թէ միայնութեան հոգին շնչում էր անապատի բոլոր տարածութեան մէջ։

Մ՛եք ծառերի միջից նկատեցինք մի երիտասարդ, որ ձեռնում էր մի լապտեր լուսած, նմանում էր գարնան ոգուն, և թափառում էր անտառների մէջ, բնութիւնը վերստին կենդանացնելու համար։ Սա մի տարփածու էր որ երթում էր խնդց տալու իւր որպիսութիւնը իւր սիրելեան կնոջ խրճիթում։

Եթէ կոյսը հանդցնում լապտերը, ապա ընդունում առաջարկած ընդլայնը. եթէ նա քօղաւորում երեսը առանց հանդցնելու լապտերը, ապա մերժում նա իւր փեսան։

Պատերազմողը սողալով ստուերների մէջ, կիսաձայն երգում այսպիսի խօսքեր. «Արևը դեռ ևս չբացուած սարերի կատարի վերայ, կ'երթամ ևս որոնելու իմ առանձնակեաց աւաղնին անտառի կաղնիների մէջ»։

«Ես կապել եմ նորա վղնի մի յախճապակեայ քառանմանակ. նորա վերայ տեսանելի է երեք կարմիր հատիկ իմ սիրոյ համար, երեք մանուշակագոյն իմ երկիւղի և կասկածանքի համար, երեք կապոյտ իմ յոյսերի համար։

«Աչքեան ունի հերմելինի աչքեր և թեթև մազեր որպէս մի ըրնձաբեր դաշտ. նորա բերանը է մի վարդակարմիր խեցեմորթ, մարգարիտներով պատած. նորա երկու ատինքը են որպէս երկու փոքրիկ անարատ ուլենիք, մի և նոյն օրում ծնած մի հատ մօրից։

«Թող Միլան հանդցնէ այս լապտերը. թող նորա բերանը փչէ նորա վերայ մի սիրահետական հոտ։ Ես պաղատոր կը գործեմ նորա արգանդը։ Հայրենիքի յոյսը կը կախուի նորա բազմաթատ ատինքից, և ես կը քարշեմ իմ խազաղական ծխախողը որդուս օրօրոցի վերայ»։

«Ո՜հ, թողէք ինձ, յառաջ քան թէ արևը բացուել էր սարերի կատարի վերայ, գնալ այն տեղ որոնելու իմ առանձնակեաց աղաւնին անտառի կաղնիների մէջ»։

Այսպէս էր երգում այս երիտասարդը, որի եղանակները ընկղմեցին տրտմութեան մէջ իմ սիրտը և փոխեցին Ամալայի երեսի կերպարանքը։ Մեր ձեռքը կցած միմեանց հետ, գողացին մինը միւսի մէջ։ Բայց մեր ուշադրութիւնը փախաւ այս տեսարանից դէպ ի մի այլ տեսարան, որ մեզ նոյն քան վտանգաւոր էր։

Մեր անց կացանք մի մանուկի գերեզմանի մօտից, որ սպասաւորութեամբ իրրև հողասահման երկու աղդերի մէջ։ Նորան ամիսուայծ էին ճանապարհի մօտին, ինչպէս սովորութիւն է, այն խորհրդով, որ պատանի կանայքը դիմելով դէպ ի աղբիւրը կարողանային ներս ընդունել իւրեանց արգանդի մէջ այն անմեղ էակի հոգին և յետ տալ նորան հայրենիքին։ Անուշ հետև տեսանելումէին այս լոպէիս նորահարսներ, որ ցանկանալով մայրութեան քաղցրութիւնքը, աշխատումէին, շրթունքը կիսով չափ բաց արած, ընդունել իւրեանց մէջ փոքրիկ մանուկի հոգին, որ կարծումէին թէ թափառումէ ծաղիկների վերայ։ Ցետոյ եկաւ հարազատ մայրը, գնելու գերեզմանի վերայ մի որպ սմինդր և սպիտակ շուշանի ծաղիկներ։ Նա ուռզից երկիրը իւր կամքով, նստաւ խոնաւ կանաչավայրի վերայ և խօսեց դէպ ի իւր մանուկը դիմաշարժ ձայնով.

«Ո՛ւր տեղիք ունէի ես արտասուելու քեղ քո հոդեղէն օրօրոցի մէջ, ոմ իմ նորածին մանուկ։ Երբ որ փոքրիկ թռչունը մեծանումէ, պիտոյ է նո-

րան որոնել իւր կերակուրը, և նա գտանումէ անապատի մէջ դառն հատիկներ շատ։ Գո՛նեայ դու անիծուած մնացիր ցաւերից. գո՛նեայ քո սիրտը ազատ մնաց մարդերի կլանող ընչից։ Կոկոնը, որ չորանումէ իւր պատնի մէջ, անցանումէ իւր բոլոր անուշահոտութեամբը, որպէս դու, ով իմ որդի, անցար քո բոլոր անմեղութեամբ։ Երանի՛ նոցա, որ մեռանումեն օրօրոցում, նորա պիտեցած են միայն մի մօր համբոյրներ և ժպտումն»։

Ընդէն մեր յատուկ սրտից յաղթահարուած լինելով մէք, խորին ցաւով խոցուեցանք այս պատկերներից սիրոյ և մայրութեան, որ ասես թէ այնուհետև հալածուէին մեղ այս կախարդական առանձնութեանների մէջ։ Ես իմ գրկի մէջ տարայ Ամալան անտառի ներսը, և ասացի նորան խօսքեր, որ այսօր ղուր ջանք պիտի լինէր որոնել իմ շրթունքի վերայ։ Հարաւային հողմը, իմ սիրելի որդեակ, կորուսանումէ իւր ջերմութիւնը անցանելով սառնապատ սարերի վերայով։ Սիրոյ յիշատակները մի ալեւորի տրտում, այնպէս են որպէս խաղաղաւէտ լուսնաթողըրակից բացարձակած օրալոյսը, երբ որ արևը մայր էր մտել և լռութիւնը տիրումէր վայրենաբնակների խուղերի վերայ։

Ո՛վ կարող էր փրկել Ամալան. ո՛վ կարող էր զօրութիւն տալ նորան ընդդիմանալու ընութեանը։ Ո՛չ այլ ինչ, եթէ մի հրաշք, անտարակոյս. և այս հրաշքը կատարվեցաւ։ Սիմաղանի դուստրը դիմեց պաղատանքին դէպ ի աստուածը քրիստոնեաների. նա վայր ընկաւ գետնի վերայ և ասաց մի ջերմեռանդ աղօթք, վերուղղելով նորան դէպ իւր մայրը և կոյսերի թագուհին։ Ա՛յս րոպէին ահա, ով իջեայ իմ մէջ մի զարմանալի զգալութիւն այն կրօնի մասին, որ անտառների մէջ, կեանքի բոլոր ղըկանքների մէջ, կարող է հաղարապատիկ շնորհաբաշխ լինել անբաղդներին. այն կրօնի մասին որ իւր կարողութիւնը դէմ դնելով ախտերի հեղեղին, բաւական է միայն յաղթելու նոցա, երբ որ ամենայն բան ճանապարհ է բացում այդ ախտերին, և անտառների թագնութիւնը և մարդերի բացակայութիւնը և ստուերների հաւատարիմ հովանաւորութիւնը։ Ո՜հ, ինչ-բան աստուածդղէն երևեցաւ ինձ այն հաստարակ վայրենակեաց կինը, տէր Ամալան, որ ծունր խոնարհեցուցած մի հինաւուրց եղևնու առաջև որպէս մի սեղանի տրտում, ուխտ էր կատարում իւր Աստուծոյ առաջև մի կատարեալ սիրականի համար։ Նորա հայեացքը վերուղղած դէպ ի աստղը գիշերի, նորա թուշերը շոշոփելով կրծնի և սիրոյ արտասուքից, յուզանումէին մի անմահական զեղեցկութիւն։ Շատ անգամ երևեցաւ ինձ, որպէս թէ կամէր նա թռիչք առնուլ դէպ ի երկինք. շատ անգամ ես կարծեցի տեսանել և լսել ծառերի տերևների մէջ, լուսնի շառաւիղների վերայ ցած իջանելը այն հոգիների որ քրիստոնեաների Աստուածը ուղարկումէ սարերի ճգնաւորներին, երբ որ հաճոյ էր նորան հրաւիրել իւր մօտ այդ մարդիկը։ Ես տրտմե-

ցայ այդ բանի վերայ, որովհետև երկիւղ ունէի, մի գուցէ Աթալան ունէր միայն սակաւ օրեր ապրելու երկրի վերայ։

Ես այդ Աթալան թափուեմ այնքան արտասուք, նա ցուցանուեմ իւր անձը այնքան վատաբաղդ, որ ես գրեթէ կամէի յանձն առնուլ գնալ և հետանալ. և ահա հնչեց անտառի մէջ մահու աղաղակ։ Ընդս վընասուած մարդիկ յարձակվեցան իմ վերայ. մեզ տեսած էին. պատերազմի մեծաւորը հրաման էր տուել որոնելու մեզ։

Աթալան որ նմանուեմ մի թագուհու իւր հպարտ գնացքով, անարժան համարեց խօսել այս պատերազմողների հետ. նա ձգեց նոցա վերայ մի գուռզ հայեացք և դարձաւ Սիմաղանի մօտ։

Նորա բարեխօսութիւնը իւր հօր առաջև անօգուտ եղաւ. կրկնապատկեցին իմ պահապանքը, ծանր ծանրացուցին իմ կապանքը, հեռացուցին իմ սիրականը։ Հինգ գիշեր անց կացան և մեք նկատեցինք Ապալաշուկլան որ գրած է Շատա-Ուշ գետի ափումը։ Խոկդն պսակեցին ինձ ծալիկներով, նկարեցին երեսս կապոյտ և կարմիր գուներով, կախեցին ուլունքներ քթիցս և ականջիցս և դրեցին ձեռքս մի շիշիկուէ (երաժշտական գործի վայրենարնակ մարդերի)։

Ընտիպ զարդարուած զոհուելու համար, ներս եմ մտանում ես Ապալաշուկլայի մէջ, բաղմութիւնը աղաղակելով մի առ մի։ Կորած էր իմ կեանքը, և ահա լսելի եղաւ մի կնկրի ձայն, և Մրիկօն, այսինքն մեծաւորը ազգի հրամայեց ժողով կազմել։

Ասա գիտես, ծերպակ, այն տանջանքը որոնց վայրենաբնակ ազգերը ենթարկուեմն իւրեանց պատերազմական գերիքը։ Քրիստոնեաների առաքեալքը, յանձն առնելով մեռանել, և մի անվաստակելի մարդասիրութեամբ կարողացել էին շատ ազգեր համոզել մի բաւական թեթև ծառայութեան լծի հետ փոխանակել այն ահարկու սովորութիւնը այրելու մարդիկ։ Մուսկօգուլժեանքը գեռ ևս չէին ընդունել այդ սովորութիւնը, բայց մի բազմաթիւ բաժին յայտնել էր այդ մասին իւր հաւանութիւնը։ Եւ այս կարևոր խնդիրը վճռելու համար էր, որ Մրիկօն ժողովուեմ Սաշեմների։ Ինձ տարան դէպ ի խորհրդածութեան տեղը։

Ես հետի Ապալաշուկլայից բարձրանուեմ մի առանձին հողաբլրի վերայ խորհրդածութեան վրանը։ Երեք շարք սիւների կերպարանութեամբ փառաւոր ճարտարապետական շինուածը այս բոլորակի։ Սիւները էին նոճի ծառից, կոկած և քանդակած. նորա ցուցանուեմին առևի բարձրութիւն և հաստութիւն, և տակաւանուեմին թռուցիկ, ինչպան առևի մօտնուեմին միջնավայրին որ նշանակվուեմ էր մի հատ սիւնով։ Այս սիւնի կատարից արձակվուեմին կեղևեայ շիրտեր, որ անցանելով այլ սիւների կատարի վերայից, ծածկուեմին վրանը, ձևաւորելով մի թաղանցիկ հովանի։

Խորհրդականքը ժողովուածն. Յիսուն ալեւոր, կուղբի մորթից վերարկուներ հագած դասաւորուածն մի տեսակ աստիճանաւոր նստարաններուն վերայ որ շինած էին վրանի դրան առաջև։ Մեծ առաջնորդը նստած է նոցա մէջ տեղում, ձեռնում բռնած խաղաղութեան ծխախողը, կիսով չափ գունաղարդած, պատերազմի համար։ Ալեւորների աջ կողմում տեղաւորուածն Յիսուն կանայք, կարապի փետուրներից յօրինած հանդերձով ղեկտուածուած։ Պատերազմի առաջնորդքը, տօմահատը (կացինը) ձեռքում, սաղաւարտաւիւտուրը գլխին, բաղկները և կուրծքը արիւնով ներկած, բռնուածն ձախ կողմը։

Մինջավայրեան սիւնի ոտքում վառուածէ խորհրդարանի կրակը։ Առաջին կախարդը, տաճարի ուղի պահապաններից շրջապատուած, երկայն հանդերձով և մի յարդալից բոլ գլխին, թափում է կռպալմի բալասան կրակի վերայ և ղոհ է մատուցանում արեգակին։ Այս երեք կարգերը խորհրդականների, աղեղը, տիկնայք, պատերազմողք, այս քուրմերքը, այս խընկարկութեան ամպածուխքը, այս ղոհաբերութիւնը, բոլորը սպասաւոր է տալու այս խորհրդարանին մի վեհմտիտ կերպարանք։

Ես շղթայած կանգնած էի ժողովի մէջ տեղում։ Ղոհաբերութիւնը աւարտուած, Միկոն վեր է կաշնում խօսքը և բացայայտում է պարզաբար գործը որի պատճառով հաւաքուել էր ժողովը։ Նա նետում է մի կապոյտ օձամանեակ դահճի մէջ որպէս վկայութիւն նորան, ինչ որ ասել էր։

Ընդհատեւ մի Սաշեմ արծուի ցեղից բարձրանում է տեղից և խօսում այսպէս.

«Հայր իմ Միկո, Սաշեմներ, տիկնայք, պատերազմողք չորս ցեղերի Արծուի, Կուղբի, Օձի և Կրիայի. չվոխենք ոչինչ մեր նախահարց վարքից, թող այրենք գերին և չմեղկացնենք երբէք մեր արիութիւնը։ Այս է մի տօնական սպիտակամորթ մարդերի, որ առաջարկում ձեզ. նա կարող է միայն լինել կորստաբեր։ Տուեցէք ինձ մի կարմիր օձամանեակ որպէս բռնականութիւն իմ խօսքիս։ Ես ասացի»։

Ընդ նա նետում է մի կարմիր օձամանեակ։

Մի տիկին բարձրանում է տեղից և խօսում է.

«Ով իմ հայր Արծիւ, դուք ունիք մի աղուէս և մի կրիայի խոհեմ շրջանկատութիւն։ Ես կամիմ ամրացնել ձեր հետ բարեկամութեան կապը, և մեր միասին կը տնկենք խաղաղութեան ծառը։ Բայց թող վոխենք մեր նախահարց սովորութիւններից այն բաները, որ կորստաբեր են։ Թող ունենանք մեր գերին, որ կը մշակէին մեր դաշտերը և թող այսուհետև չլինեք ցաւելի աղաղակները գերիների, որ դղրդում են մայրերի սիրտը։ Ես ասացի»։

Ինչպէս ծովի ալեքները խորտակում են միմեանց մի վոտորկի միջոցում, ինչպէս աշնանային օրերում չորացած տերեւները խլրտում են ծառերից մի մրրկով, ինչպէս Սիշասերեի եղջիւրները թնդում են և կրկին ուղղում են ան-

կարծելի ջրհեղեղի մէջ, ինչպէս մի երամակ եղջերուների ազատակումէ մի անտառի խորքի մէջ, նոյնպէս տարուբերումներ և մնչումներ խորհրդարանը, Սաշմինները, պատերազմոդքը, տիկնայքը խօսում էին փոխ առ փոխ, կամ առ մինչեւնան միասին։ Օդուանները հակառակումն միմեանց, կարծիքները բաժանումեն, խորհրդածութիւնը մնա է քայքայվելու. բայց վերջապէս հին սովորութիւնը յաղթող է հանդիսանում, և ես դատապարտուած եմ դէպ ի մահ փայտակուտի մէջ։

Մի հանգամանք մէջ ընկաւ, յետ ձգելու իմ պատիժը. Մեռոֆնէէ ոճը կամ թէ Հռիփնէէ ոճախոհութիւնը։ Սովորութիւն է ոչ մի փերի չսպանել այն օրերի միջոցին, որ նուիրած են այս արարողութեանը։ Ինձ յանձնեցին մի արթուն պահապանի, և անտարակոյս, Սաշեմները հետացուցած էին Սիմաղանի դուստրը. պատճառ, այնուհետև չտեսայ ես նորան։

Բայց ազգեր աւելի քան թէ երեք հարիւր տապարեզ հեռաւոր շրջակայքից գալիս էին բաղմութեամբ, տօնախմբելու Հռիփնէէ ոճը։ Կառուցել էին մի երկար խուղ մի բացակայ տեղի վերայ։ Ժամադրած օրուայն ամենայն խրճթի փերդաստան դուրս փորել իւր հայրերի մեացորդքը նոցա աւանձին գերեզմանների միջից, և այդ ոսկրները կամ տուեցին կարգով ու գերդաստանով նախահարց ընդհանուր պահն պատերից։ Հողմերը (բարձրացել էր մի փոթորիկ), անտառները, ջրվէժքը գոռումէին դրսումը, մինչ զանազան ազգերի ալեւորները կապումէին իւրեանց մէջ դաշներ խաղաղութեան և միաբանութեան իւրեանց հօրերի ոսկրների վերայ։

Նոքա կատարումեն թաղման խաղարկութիւնք, վազելով, փնդակ ձգելով, ճան խաղալով։ Երկու կոյս աղջիկ աշխատումեն խլել միմեանցից մի ուռենու գաւազան։ Նոցա ստինքի (ծծերի) պտուկները շօշափումեն միմեանց, նոցա ձեռքը թռթռումեն այն գաւազանի վերայ, որ նոքա բարձրացնումեն դլուխների վերայ։ Նոցա գեղեցիկ մերկ ոտները փաթաթվումեն միմեանց, նոցա քաղցր շունչերը խառնվումեն իրարու հետ. նոքա նայումեն իւրեանց մայրերի վերայ, կարմրատակումեն. լինում ծափահարութիւն։ Կախարդը կանչում Միշաբուին, պաշտպան ոգին ջրերի. նա պատմում մեծ նապատակի պատերազմները ընդդէմ Մաչխանխուսի, աստուածին չարի։ Նա պատմում առաջին մարդու և Ադամահանի առաջին կնոջ կործանումը երկնքից, իւրեանց անմեղութիւնը կորուսանելու պատճառով, երկրի ապականութիւնը եղջօր արիւնով, ամբարիշտ Թուսկեկայի զոհելը արդար Տահուխատարօնը, Մասուի միայնակ փրկութիւնը իւր նաւի մէջ մեծ պաշտպան ոգու հրամանով, և ազատի արձակումը որ ծանուցանէ ցամաք Հողի գոյութիւնը. Նա պատմում նոյնպէս գեղեցիկ Ինդայէի մասին, որ յետ էր կոչուած ոգիների աշխարհից իւր ամուսնոյ քաղցր նուագներով։

Ա՛յս խաղերից և այս տաղերից յետոյ պատրաստվումեն տալու նահապետը մի յաւիտենական հանգիստ գերեզմանի։

Հ՝ատա-Ուշ գետի ափունը տեսանելուն մի վայրենի թռչնի, որ ժողովրդների մեծարանքով սրբացուցած էր։ Այս աղջիկները սովորած էին լուանալ իւրեանց կեղևայարմար զգեստը այս տեղ և անապատի փչողութեան տակ կախ տալ այդ հին ծառի ճիւղերի վերայ։ Այս տեղ էր, ուր նոքա փորել էին մի ահագին գերեզման։ Ուղևորվումն թաղման սրահից, երգելով մահու երգը. ամեն մի գերդաստան կրում էր իւրեանց նուիրական նշխարք։ գալիս են դէպ ի գերեզմանը, այն տեղ ամիսումն մեռածների ծնացորդքը, դաս դաս տեղաւորելով և բաժանելով միմեանցից արջի և կուղպի մորթերով։ Գերեզմանի թումբը բարձրանում է նորա վերայ տնկումն Արտաքին ե ինչ ծառը։

Հրատասունք մարդկային ազգը, սիրուն որդեակ. սոյն իսկ Ինդիանացիք, որոնց սովորութիւնքը են այնքան գութ շարժող. սոյն իսկ կանայքը որ ցոյց էին տուած ինձ այնքան քնքուշ կարեկցութիւն, այժմ պահանջում էին իմ արիւնս, բարձր աղաղակներով. և ամբողջ ազգեր յետ էին ձգում իւրեանց ուղևորութիւնը, որ հաճութիւն գտանեն տեսանելով որ մի երիտասարդ կրում է զարհուրելի տանջանք։

Մի ձորի մէջ հիւսիսումը, մի փոքր հեռի մեծ գիւղից բարձրանում էր մի անտառ նոճի և մայր ծառերի, որ ասվում էր Արէ-ի անտառ։ Այն տեղ հաստանում էին աւերակների միջով որ պատկանում էին այնպիսի յիշատակարանների որոնց յառաջագոյութիւնը անգիտելի է, որ և համարվում է գործ մի ազգի, որ այժմ անյայտ է։ Այս անտառի միջնատեղում տարածվում էր մի հրապարակ ուր ըղհում էին պատերազմական գերիքը. դէպ ի այն տեղ տարան ինձ յաղթական հանդիսով։ Ամենայն ոք պատրաստվում գործակից լինել իմ մահուս. տնկումն գետնի մէջ սիւնը Արեսկուի, եղևնիքը, կնճռիքը, նոճիքը խորտակվում էին կացնի տակ. վայտակոյտը բարձրանում. բազմականքը շինում էին կիսաթոլորակ նստարանք ծառերի ճիւղերից և բուներից։ Ամեն մինը հնարում էր պատուհաս. մինը դիտաւորուած է պատուհասել իմ գլխի սկաւառակի կաշին, միսը կամ պրել աչքերս վառուն կացինով։ Ես ըսկսում էի իմ մահու տաղերգութիւնը։

«Ես երբէք չեմ վախենում տանջանքից. ես քաջ եմ, ով Մուսկոգուլժեանք, ես ասպարէզ եմ կանչում ձեզ. ես արհամարհում եմ ձեզ աւելի քան թէ կանայքը։ Իմ հայր Ուլթալիսը, Միսկուի որդին, լսել է ձեր առաւել հռչակաւոր պատերազմողների գլխի սկաւառակից, դուք չէք դուրս հանելու իմ սրտից և ոչ մի հառաչանք»։

Մի պատերազմող դուրս կանչելով իմ տաղերգութենից, խոցեց նետով իմ բազուկը. ես ասացի. «Ե՛ղբայր, շնորհակալ եմ քեզանից»։

Անպէտ շատ գործունեայ էին գահիճները, այնու ամենայնիւ պատժի պատրաստութիւնքը չկարողացան աւարտուիլ արևամուից յառաջ։ Հարցաքննեցին կախարդի կարծիքը, և սա պատուիրեց վառվռեցնել ստուերների

ոգիքը, և իմ մահս յետ ձգուեցաւ գեռ ևս մինչև վաղուան օրը։ Բայց Ինդիանացիք անհամբերութեամբ սպասելով վայելելու տեսարանը և աւելի շուտով պատրաստ լինելու արևպաշին, չհեռացան Արխէ-անտուէյ. նոքա վառեցին մեծ կրակներ և սկսան ծոնակամութիւնք առնել և պար գալ։

Բայց ինձ տարածել էին քամակիս վերայ։ Շուաններըը վղևս, ոտերիս, ձեռներիս կապած, ամրացրած էին գետնի մէջ ցցած գեղարդների վերայ։ Պատերազմողքը քնած էին այս շուանների վերայ, և ես կարող չէի մի շարժողութիւն առնել առանց զգաստացնելու նոքանց։ Գիշերը յառաջանում. երգերը և պարախաղութիւնքը հետ ղհետէ դադարում են. կրակները արձակում են միայն աղօտ փայլողութիւնք, և նոցա առաջև տեսանելումն տակաւին անց ու դարձող ստուերներ մի քանի վայրենաբնակների. բոլորքեան հանգստանում են. ինչ չափով մեղմանում մարդերի աղաղակը, նոյն չափով զօրանում անապատի աղմուկը, և ձայների խառնակութեանը հետևում են հողմի հեծեծանքը անտառի մէջ.

Այս, այն ժամն էր, երբ մի մանուկ ինդիանուհի, որ մայր էր դարձած, ահ ու դողով վեր է թռչում քնից մէջ գիշերում, որովհետև լսել էր աղաղակը իւր անդրանկածնի որ խնդրում էր իւր քաղցր սնունդը։ Աչքերս բևեռած դէպ ի երկինք, ուր նոր լուսինը թափառում էր ամպերի մէջ, ես մտածում էի իմ վերջիս վերայ։ Ամենալուն երևումեր ինձ մի հրէշ անշնորհակալութեան. նա, որ ինձ բարձի թողի էր արել իմ պատժիս րոպէին, ինձ, որ նախապատիւ էի համարել զՀ տալ իմ անձը կրակին, քան թէ հրաժարուիլ նորանից։ Ամենէն ամենայնիւ զգում էի ես, որ նորան սիրում էի միշտ և թէ ուրախութեամբ մեռանելու էի նորա համար։

Ամենամեծ ուրախութեանների մէջ դրած է մի խթան որ զարթեցնում մեզ, ասես թէ, ծանուցանելու մեզ, թէ պիտոյ էր նպաստ առնուլ (օգուտ քաղել) այս արագընթաց րոպէից. սորա հակառակ, մեծ ցաւերի մէջ, մի անպատմելի ծանրութիւն թմրեցնում մեզ. աչքերը, արտասուքից վաստակած, բնականաբար խնդրում են փակուիլ և նախանձամութեան բարութիւնը երևելի է լինում մինչև մեր թշուառութեանների մէջ։ Ես երազում էի, թէ արձակում էին իմ կապանքը, ես կարծում էի զգալ այն թեթևութիւնը որ զգում է մի մարդ, երբ որ, ամբոր կապանքի մէջ սեղմած լինելուց յետոյ, մի օդնական ձեռն թուլացնում է մեր շղթայքը։

Այս տպաւորութիւնը եղաւ այնպէս կենդանի, որ ստիպեց ինձ բանալ աչքերս. փայլողութեամբ լուսնի, որից մի շառաւիղ դուրս էր արձակվում երկու ամպերի մէջ տեղ, ես աղօտապէս տեսանում էի մի մեծ սպիտակ կերպարանք թեքուած իմ վերայ և աշխատելով լռութեամբ արձակել իմ կապանքը։ Ես կամենում էի ձայն տալ, և ահա մի ձեռք, որ ես ճանաչեցի խակոյն, փակեց բերանս։ Կամում էր մի չուան, բայց զորան կտրել, երևում էր անկարելի, առանց շօշափելու մի պատերազմող, որ իւր մարմնով ամենևին

ծածկել էր նորան։ Ամալան ձեռը պարզումէ դէպ ի այն կողմ. պատերազմողը զարթնումէ կիսով չափ և նստումէ կանգուն։ Ամալան մնումէ անշարժ և նայումէ նորա վերայ։ Ինդիանացին կարծումէ տեսանել աւերակների ոգին. նա կրկին հանգստանումէ փակելով աչքերը և կարդալով դէպ ի իւր Մանիթուն։ Ջուանակապը կտրած է։ Ես բարձրանումեմ տեղիցս, հետևումեմ իմ ազատողին, որ պարզումէ ինձ ծայրը մի աղեղի, որի միւս ծայրը բռնել է ինքը։ Բայց ինչքան վտանգներ շրջապատումեն մեզ. երբեմն պակաս էր մի մազաչափ, որ մեք խթէինք քնած վայրենիքը. երբեմն մի պահապան հարց ու խնդիր էր առնում մեզանից, որին Ամալան պատասխանումէր փոխելով իւր ձայնը։ Երեխայքը բարձրացնումէին աղաղակ, գամիւռները հաչումէին։ Մեք հազիւ թէ դուրս էինք եկած կորստաբեր շրջանի միջից, և ահա շների հաչիւնքը դղրդումէին անտառքը։ Բանակը զարթնեցաւ, հաղարաւոր կրակներ վառուեցան, ամենայն կողմից վազվզումէին վայրենիքը լապտերներով. մեք փութացուցինք մեր գնացքը։

Երբ որ արևը բացուեցաւ Ապալաչէսի վերայ, մեք արդէն հեռի էինք։ Ի՛նչպէս մեծ էր իմ երջանկութիւնը, երբ որ ես դարձեալ միանգամ գտանվումէի անապատում Ամալայի հետ, Ամալայի, որ յաւիտեան նուիրուած էր իւր անձը ինձ։ Ես չգիտէի թէ ինչ խօսքերով թարգմանեմ սրտիս զգացողութիւնքը. ես ծունր խոնարհեցուցի և ասացի Սիմաղանի աղջկան. «Մարդիկ մի շատ փոքր բան են. բայց երբ որ ոգիքը գալիս են նոցա այցելութիւն, այնուհետև մարդիկ ամենևին ոչինչ են։ Դուք մի ոգի էք, դուք այցելութիւն արեցիք ինձ, և ես կարող չեմ խօսել ձեր առաջև»։ Ամալան պարզեց ինձ ձեռքը, ժպտմամբ։ «Հարկաւոր է ինձ, ասաց նա հետևել քեզ, որովհետև դու չկամիս փախչել առանց ինձ։ Այս գիշեր ես կաշառեցի կախարդը ընծաներով, ես արբեցուցի քո դահիճները կրակի ըմպելիքով (արաղով) և ինձ պարտ էր դնել իմ կեանքս քո համար, որովհետև դու ղրել էիր քո կեանքը իմ համար։ Այո՛, կռապաշտ երիտասարդ, յաւելացրեց նա մի զարհուրելի շեշտով, զրկանքը լինելու է փոխադարձ»։

Ամալան տուեց ինձ այն զէնքը որ հոդաբարձու էր եղել առնուլ իւր հետ. ապա փաթաթեց իմ վէրքը, սրբելով նորան սեխաբոյսի տերևով, Թրջեց նորան իւր արտասուքով։ «Դա մի բալասան է, ասացի ես, որ դու թափուես իմ վէրքի վերայ։ — «Ես վախումեմ մանաւանդ, որ դա լինէր թոյն» պատասխանեց նա։ Նա պատառեց մի կտոր իւր լանջապանակից և շինեց նորանից փաթեթ և կապեց նորան մի օղով իւր մազերից։

Արբեցուցիչքը որ երկար ներգործումէ վայրենի աղգերի վերայ, որ և մի տեսակ հիւանդութիւն է նոցա համար, արդարև արգելք էր եղել նոցա որոնելու մեզ առաջին օրերի միջոցին։ Եթէ նոքա որոնեցին մեզ յետոյ, հաւանական է, որ այդ եղած լինէր դէպ ի արևմուտք, հաւատացած լինելով թէ մեք փորձ փորձած կը լինէինք վերադառնալ դէպ ի Մէշասեբէ. բայց մեք

ընտրել էինք ճանապարհ դէպ ի անշարժ աստղը (դէպ ի Հիւսիս), առաջնորդ ունենալով մեզ ծառերի մամուռապատ կեղևը (ըստ որում դա նոյն չափով ծառայանում որքան մատնանում Հիւսիսին)։

Ուրախ շուտով նկատեցինք որ սակաւ էր մեր օգուտը իմ ազատմանից։ Այժմ անապատը բացումէր մեր առաջև իւր անչափելի դաշտավայրերը։ Անփորձ անտառային կեցուածեան մէջ, դուրս եկած մեր ճշմարիտ ճանապարհից և թափառելով անխորհրդաբար, ինչ պիտի լինէր մեր վերջը։ Շատ անգամ, նայելով Աթալայի վերայ, մտաբերումէի ես այն հին պատմութիւնը Հագարի, որ Լոպեցը ինձ կարդալ էր տուել, այն անցքը որ պատահել է Թուրաբեայի անապատում, շատ վաղուց, այն դարերում, երբ մարդիկ ապրումէին երեքպատիկ աւելի երկար քան մեք կաղնիքը։

Աթալան պատրաստեց իմ համար մի վերարկու հացի ծառի երկրորդ կեղևից. պատճառ, ես համարեա մեք մերկ էի. նա յօրինեց իմ համար տրեխներ մշկահոտ վայրենի մկան կաշուց, ոզնու փշասեղներով. և ես իմ կողմից հոգալարձու եղայ նորա զարդարանքի մասին։ Երբեմն ես դնումէի նորա գլխին մի պսակ մալուածառի կապոյտ ծաղիկներից որ մեք գտանումէինք մեր ճանապարհի վերայ, Ինդիանացոց բարձի թողի արած գերեզմանատեղում, իսկ երբեմն շինումէի նորա համար օղամանեակներ ազալեայի կարմիր հատիկներից, և յետոյ սկսումէի ժպտիլ, զննելով նորա զարմանալի գեղեցկութիւնը։

Երբ որ մեք հանդիպումէինք մի գետի, անցանումէինք նորա վերայից լաստափայտով կամ մեք լող տալով։ Աթալան հաստատումէր իւր ձեռը իմ ուսիս վերայ, և որպէս երկու ճանապարհորդ կարապներ մեք անցանումէինք այս անապատ հեղեղատների վերայից։

Յաճախ, ցերեկի մեծ ջերմութեան միջոցին մեք որոնումէինք պաշտպանութիւն մայր ծառերի մամուռների տակ։ Գրեթէ բոլոր ծառերը ֆլորիդայի, մանաւանդ մեք մայր ծառը և քարակաղնին ծածկած են սպիտակ մամուռով, որ նոցա ճիւղերից իջանումէ մինչև ի գետին։ Երբ որ դու լուսնակ գիշերի փայլողութեան տակ տեսանումես մի տավանայի չոր ու ցամաք տարածութեան մէջ մի առանձնական քարակաղին ղգեստաւորած այս հագուստով, դու կը կարծէիր թէ տեսանումես մի ցնորք որ քարշումէր յետքից իւր երկայն քօղերը։ Տեսարանը նոյնքան ևս կենդանագրական է լցս ցերեկով. պատճառ թրթռուկներ, փայլուն ճանճեր, սիրուն թռչնակներ, կանաչ թուխակներ, երկնակապոյտ կաչաղակներ անթիւ բազմութեամբ գալիս են ցցուելու այս մամուռների վերայ, պատկերացուցանելով տես թէ մի հիւսուած սպիտակ բուրդից, ուր եւրոպական գործարարը աղնեգործել էր շշղղոլուն միջատներ և թռչուններ։

Այս զմայլեցուցիչ իջևանների մէջ որ մեծ ոգին պատրաստել էր, մեք հանգստանումէինք ծառերի հովանաւորութեան տակ։ Երբ որ հողմերը իջա-

նումին երկնքից ճօճեցնելու այս մեծ մայրին, երբ որ այս օդեղէն ամրոցը, նորա ճիւղերի վերայ կառուցած, տատանվումեր թռչունների և ճանապարհորդների հետ որ քնած էին նորա հովանաւորութեան տակ, երբ որ հաղարաւոր շնչողութիւնք արձակվումին այս շարժական շինուածի նրբաշաւիղ անցքերից, և կամարներից — հին աշխարհի հրաշքները երբէք կարող չէին համեմատուիլ այս անապատի յիշատակարանի հետ։

Մենայն երեկոյ մեք վառումեինք մի մեծ կրակ և կառուցանումեինք ճանապարհորդական խուղը մի կեղևից որ հաստատած էր չորս սիւների վերայ։ Եթէ ես որսացել էի մի վայրենի հնդկահաւ, աղաւնի կամ փասիան անտառի, մեք կախումեինք նորանց վառած կաղնու առաջև մի փայտեղէն շամիլրի ծայրում, որ տնկած էր գետնի մէջ, և թողումեինք հողմին հոգալ բարձրութիւնը շրջելու որսորդի կողոպուտը։ Մեք ուտումեինք մամուռներ որ ասլամեն ապառաժների փորոտիք, շաքարաւնակ կեղևներ սպիտակածառի և մայիսեան խնձորք որ ունեին դեղձի և մորի ճաշակ։ Սև ընկուզենին, ըստ վենդամոսը, սումաքը հասուցանումեին դինի մեր սեղանի համար։ Երբեմն ես գնումեի որոնելու եղէգնաբլոյսների մէջ մի տունկ, որի, եղջիւրի պէս երկայնացած ծաղիկը բռվանդակումեր իւր մէջ մի բաժակ ամենամաքուր ցօղ։ Մեք օրհնումեինք նախախնամութիւնը, որ մի ծաղկի տկար ստեղնի վերայ դրել էր այս ականակիտ աղբիւրը, ժահահոտ ճահիճների մէջ, ինչպէս նա դրել է յոյսը տրտմութեամբ խոցուած սրտերի խորքի մէջ, ինչպէս նա յաոաջացնումէ առաքինութիւնը կեանքի թշուառութիւնների ծոցի միջից։

Ուշադ. ես շուտով վերահասու եղայ որ ես խաբուել էի, տեսանելով Ամերիկան հանգիստ արտաքուստ։ Քանի որ մեք յառաջ էինք գնում, նա նոյնքան և ընդարձակ տրտում։ Շատ անգամ սարսուռ էր գալիս նորա վերայ, և նա շտապ տապնապով պտտումեր ղլուխը։ Ես անակնկալ հանդիպումէի նորան այն րոպէին, երբ նա լևևումեր իմ վերայ մի ախտաբորբոք հայեացք, որ յետոյ դարձուցանումեր դէպ ի երկինք մի խորին տխրամտութեամբ։ Ինչ որ ինձ զարհուրեցնումեր մանաւանդ, էր մի գաղտնիք, մի խորհուրդ, նորա սրտի խորքի մէջ ծածկած, որ ես աղօտապէս նկատումէի նորա աչքերի մէջ։ Մի՛շտ մօտ քարշելով ինձ և դարձեալ ի բաց խեթկելով, կենդանացնելով և կործանելով իմ յոյսերը, ձգել էր ինձ մի որպիսութեան մէջ, որ երբ կարծումէի ես թէ մի փոքր յառաջ էի գնացել քննելով նորա սիրտը, գտանումէի ինձ մի և նոյն տեղում անշարժ մնացած։ Քանի անգամ ասել է նա ինձ. «Ով իմ սիրական երիտասարդ, ես սիրումեմ քեզ որպէս ծառաստանի հովանին ցերեկի տօթի մէջ. դու զեղեցիկ ես, որպէս անապատը իւր բոլոր ծաղիկներով և իւր բոլոր մեղմ հողմերով։ Երբ որ թեքվումեմ քո վերայ, սարսափումեմ։ երբ որ իմ ձեռը շօշափումէ քոնը, ինձ երևումէ, թէ կամէի հոգիս աւանդել։ Անցած օրին, հողմը քո մազերը թափեց իմ երեսի վերայ, երբ որ դու հանգստանում էիր ծոցիս վերայ, ես կարծեցի զգալ թէ ինձ շո-

շարունակեին անտեսանելի ոգիք։ Ա՛յո՛, ես տեսած եմ Օկծն սարի էգ այծեամները, ես լսած եմ կեանքից յագեցած մարդերի խօսակցութիւնը, բայց ուղերի քաղցրութիւնը և ալեւորների իմաստութիւնը չեն այնքան հաճելի և այնքան ազդու, որքան քո խօսքերը։ Ա՛յնու ամենայնիւ, ո՛վ անպատդ Շաբատաս, ես երբեք լինելու չեմ քո ամուսինը»։

Ընդհակառակն, հակառակութիւնը Ամալայի սիրոյ և կրօնի մէջ, նորա անձնանուէր խանդակաթութիւնը և նորա վարքի պարկեշտութիւնը, նորա բնութեան հպարտութիւնը և նորա խորին զգացողականութիւնը, վերհամարձակ թիւնը նորա հոգու մեծամեծ բաներին մէջ, նորա ընդունականութիւնը փոքր բաների մէջ. բոլորը շինում էր նորան իմ համար մի անհամեմատելի էակ։ Ամալան կարող չէր ներգործել մի մարդու վերայ թոյլ ազդեցութիւն. լինելով ախոյանից, էր նա և զօրաւոր ազդողութեամբ լի։ Պիտոյ էր կամ պաշտել նորան, կամ ատել։

Տասնեհինգ օր արագ ու շտապ ճանապարհ կատարած մնանք մեք Ալեգանիու սարափօտու սահմանի մէջ և հասանք մինչև Թևերից Տանաղ գետը որ թափվում է Օհիոյի մէջ։ Ամալայի խորհրդակցութեամբ շինեցի ես մի նաւակ պատելով նորան շլորենու խէժով, երբ որ նորա կեղևները կարել էի միմեանց հետ մայր ծառի արմատներով։ Յետոյ Ամալայի հետ նաւ նըստեցայ և մեք թոյլ տուեցինք նաւակը գետի ընթացքին։

Ինդիանական գիւղը, Սուիկըչ անուն, իւր աշտարակաձև գերեզմաններով և իւր աւերակ խուղերով երևեցաւ մեր ձախ կողմում, մի սարաւանդի գարձուածի մօտ. մեք թողեցինք աջ կողմում քէով անուն ձորը որ վերջանում է բացահայեցութեամբ դէպ ի Ֆօրի խուղերը որ կախուած են նոյնանուն սարի ձախատումը։ Գիտը որ մեզ քարշում տանում մեր իւր հետ, հասում է բարձր զառ ի վեր ափերի մէջ, որոնց վերջումը նկատում էինք արևի մայր մտանելը։ Ա՛յս խորին առանձնութիւնը չէին երբեք խռովեցուցած մարդուս նկրպայութեամբ։ Մեք տեսանք միայն մի ինդիանացի որսորդ որ իւր աղեղի վերայ թիկն տուած և անշարժ կանգնած մի ապառաժի ծայրի վերայ, նմանում էր մի արձանի որ կատուցած էր սարի վերայ այս անապատների ոգուն։

Ամալան և ես, միաւորեցինք մեր լռութիւնը այս տեսարանի լռութեան հետ։ Ցանկարծ, աքսորական աղջիկը հնչեցուց օգերի մէջ մի ձայն լի խռովութեամբ սրտի և տիրամօտութեամբ. նա երգում էր բացակայ հայրենիքը.

«Երանի՛ նոցա, որ երբեք տեսած չեն օտարութեան խնճոյքի ծաղիկը, որ և միայն նստած են եղել իւրեանց հայրերի խնճոյքի վերայ։

«Եթէ կապտաչքն կաշտակը Միշասեբէի ասէր ամենափորձիկ թութեակին Ֆլորիդայի. «Ինչո՞ւ այդպիսի տրտմութեամբ ողջու մնս դու. մի՞թէ չունիս այս տեղ գեղեցիկ ջուրեր և գեղեցիկ սաւառներ և ամենայն տեսակ արօտներ, ինչպէս ձեր անտառներում»։ — «Ա՛յո՛, պատասխանեցու էր փա-

խըստական փոքրիկ Թուխթակը. բայց իմ բոյնս յաստիճի մէջ, ով կը տայ ինձ այդ։ Եւ արեգակը իմ սաւանայի, ունի՞ս դու այդ։

«Կերանի՜ նոցա որ երբեք տեսած չեն օտարութեան խնճոյքի ծուխը, որ և միայն նստած են եղել իւրեանց հայրերի խնճոյքի վերայ»։

«Ա՜նապարհորդը, մի վաստակեցուցիչ ուղեւորութեան ժամերից յետոյ, նստումէ տրտմութեամբ։ Նա քննումէ իւր շրջակայքում մարդերի տանելքը. ճանապարհորդը չունի մի տեղ, դնելու իւր գլուխը։ Ճանապարհորդը զարկումէ մի խուղի դուռն, դնումէ իւր աղեղը դռնի քամակում, խնդրումէ հիւրասիրութիւն. տանուտէրը ձեռնով նշանացի է առնում։ Ճանապարհորդը վեր է կաչնում աղեղը և վերադառնումէ դէպ ի անապատը։

«Կերանի՜ նոցա, որ երբեք տեսած չեն օտարութեան խնճոյքի ծուխը, որ և միայն նստած են եղել իւրեանց հայրերի խնճոյքի վերայ»։

«Դուք, զարմանալի պատմութիւններ կրակարանի շրջակայքում, քնքուշ զեղմունք սրտի, երկար սովորութիւնք սիրելու, այնքան հարկաւոր մարդուս կեանքի համար, դուք լցուցել էք օրերը նոցա, որ երբեք չեն թողած իւրեանց հայրենական աշխարհը։ Նոցա գերեզմանները են իւրեանց հայրենիքում, մայր մտանող արեւի հետ, բարեկամների արտասուքի հետ և կրօնի քաղցրութիւնների հետ»։

Կերանի՜ նոցա, որ երբեք տեսած չեն օտարութեան խնճոյքի ծուխը, որ և միայն նստած են եղել իւրեանց հայրերի խնճոյքի վերայ»։

Այսպէս էր երգում Աթալան։ Ոչինչ բան ընդհատում չէր նորա ողբական տաղերգութիւնքը բաց ի մեր նաւակի անդգալի շառաչիւնից ջրերի վերայ։ Երկու կամ երեք տեղում միայն այդ ձայների հետ հնչեց թոյլ արձագանք, որ տանելով կրկնեց մի այլ աւելի թուլահնչիւն արձագանգի, և սա դարձեալ մի երրորդ ևս աւելի թոյլի։ Կը կարծէիր թէ մեր պէս մի ժամանակ երկու անբաղդ սիրողների հոգիք զմայլուելով այս սրտաշարժ եղանակից, զովանումէին հառաչելով դորա վերջին հնչիւնքը սարի մէջ։

Այայց միայնութիւնը, սիրած առարկայի անընդհատ ներկայութիւնը, մեր նոյն իսկ ձախորդութիւնքը ամենայն րոպէ կրկնապատկումէին մեր սէրը։ Աթալայի զօրութիւնքը սկսանումէին հրաժարուիլ նորանից, և ախտերը հալ ու մաշ առնելով նորա մարմինը, կամէին յաղթող հանդիսանալ ընդդէմ նորա առաքինութեան։ Նա անդադար աղաչումէր իւր մայրը, և երեւումէր թէ նա կամի հաշտեցնել նորա խռոված հոգին։ Երբեմն հարցանումէր նա ինձանից, արդեօք լսում չեմ մի գանգատական ձայն, արդեօք տեսանում չէի ես րոպեր դուրս գալով երկրից։ Իմ մասին, ես սպառուած վաստակութենից բայց միշտ պրպտելով ցանկութենից, մտածելով թէ գուցէ անգամալի կորած էի այս անտառների մէջ, հարիւր անգամ պատրաստ էի ես զրկախառնել իմ սիրականը, հարիւր անգամ առաջարկեցի նորան կառուցանել մի հիւղ այս գետեզերքի վերայ և այն տեղ թաղել մեզ միասին։ Բայց նա միշտ ընդդի-

մնցաւ ինձ ասելով. «Մտածիր, ով իմ երիտասարդ բարեկամ, թէ մի պատերազմող պարտական է իւր անձը իւր հայրենիքին. ինչ բան է մի կին մարդ, համեմատելով այն պարտականութիւնների հետ որ ունիս դու լցուցանելու։ Քաջալերվիր, որդիդ Ութալեսի, մի քրթմնջիր ընդդէմ քո կեանքի կոչմանը։ Մարդու սիրտը է որպէս մի սպունգ պետի, որ երբեմն ներս է ծծում իւր մէջ յատակ ջուր պայծառ եղանակի միջոցներում, իսկ երբեմն ուռչում տղմոտ ջրով, երբ որ երկինքը պղտորել է ջուրերը։ Մի՞ թէ սպունգը ունի իշխանութիւն ասելու. «Ես կարծումէի թէ երբէք լինելու չէին փոթորիկներ, թէ արեգակը երբէք լինելու չէր պղտոտ ջերմ։

Ով իմն է, եթէ դու վախումես սրտի խռովութիւններից, փախիր առանձնութենից. մեծամեծ ախտերը առանձնաւոր են, և զորանց տեղափոխել դէպ ի անապատը այնպէս է, որպէս թէ բանային նոցա առաջև իբրեանց իշխանութեան սահմանը։ Հոգսերից և երկիւղներից ճնշուած, կասկածանքի մէջ մի գուցէ ընկնէինք թշնամի Ինդիանացոց ձեռք, խեղդվէինք ջրերի մէջ, խածատուէինք օձերից, կլանվէինք գազաններից, գտանելով զբաղմունք թէ մարմնի մի թշուառ կերակուր և չգիտելով այլ ևս թէ դէպ ի որ կողմ պէտք էր դարձուցանել մեր գնացքը — երևումէր թէ մեր թշուառութիւնների չափը կարող չէր այլ ևս աճել, և ահա մի պատահումն վերայ հասաւ ամենևին լցուցանելու նորան։

Վհան և եօթներորդ արևաբացն էր սկսեալ այն ժամանակից, երբ որ Թողել էինք Լորճիթները։ Կրակածին լուսինը (յունիսի ամիսը) սկսել էր իւր ընթացքը, և ամենայն ինչ գուշակումէր մի փոթորիկ։ Դէպ ի այն ժամը, երբ Ինդիանացի կանայքը վարուցանքի գործքը կախումեն սալինայի ճիւղերի վերայ, և երբ թռչնաթակի էգերը փախչումեն նոճի ծառերի խորքի մէջ, երկինքը սկսաւ թղպել։ Առանձնութեան ձայները շիջան, անապատը լռեց և անտառները մնացին մի ընդհանուր հանդարտութեան մէջ։ Շուտով մի հեռաւոր որոտի թաւալմունք թնդալով այս անտառների մէջ, որ այնքան հին են, ինչպէս աշխարհս, հնչեցուցին այն տեղ վսեմական շառաչիւնք։ Երկինքը մի գուցէ խեղդամահ լինինք, մեք շտապեցինք հասանել գետի եզերին և պատսպարել մեր անձը մի անտառի մէջ։

Այս տեղը ճախնային երկիր էր. մեք գժուարութեամբ յառաջ էինք երթում սմիլաքսեան ծառերի կամարակապ տակ, խաղողի ծառերի, լեղակաթցսերի, լուպիանների, գետնաքարշ պատատունկների մէջ, որ փաթաթվում էին մեր ոտերին որպէս թելեր։ Սպղպային գետինը դողումէր մեր չորս կողմը և ամենայն րոպէում մնա էինք մեք խեղդուելու տղմային ջրերի փոսերում։ Անհամար միջատներ, ահագին չղջիկաններ կուրացնումէին մեզ. շառաչյուն օձերը պղտիկ էին գործում ամենայն կողմից, և գայլերը, արջերը, ընձուղտները, փոքրիկ վագրները, որ գալիս էին պատսպարուելու այս առանձնաբաններում, լցուցանումէին նորանց իւրեանց մռնչիւնով։

Ո՛րչ այս, ո՛րչ այն, սիթուխիւնը կրկնապատկվումէ. ցած իջած ամպերը մոռնումն անտառների ստուերի մէջ. ամպը պատառվումէ և կայծակը գծագրումէ մի արագաթռիչ հրեղէն տարանկիւն քառակուսի։ Մի սաստիկ հողմ փչելով արևմուտքից, թաւալումէ ամպեր ամպերի վերայ. անտառները թնդումն իւրեանց կատարքը. երկինքը թաղումէ հետ ղհետէ և նորա բացուածների միջից նկատելի են նորանոր երկինքներ և լոցավառ դաշտեր։ Ի՛նչ ահարկու և ի՛նչ փառահեղ տեսարան։ Կայծակը հրդեհումէ (կրակումէ) անտառը. հրայրեացքը տարածվումէ որպէս լոցերի խուրձեր, կայծակների և ծխերի սիւներ շրջապատումեն ամպերը որ դուրս են փախում իւրեանց կայծակները լայնատարած հրայրեացքի մէջ։ Ա՛յնուհետև մեծ ոգին պատռումէ սարերի վերայ մի թանձր խաւար. այս ահագին շիտակի միջից բարձրանումէ մի խառն ի խուռն մռնչուն հողմերի գոռացքով, ծառերի հեծեծանքով, վայրենի գազանների ոռնացքով, հրայրեացքի թնդիւնով և կրկնապատիկ ղարկողութեամբ կայծակի որ շընջումէ, շիջանելով ջրերի մէջ։

Մեծ ոգին գիտէ այդ. այս րոպէիս ես տեսայ միայն Ա՛թալա, ես մտածումէի միայն նորա վերայ։ Մի սպիտակածաւալ թևքուած լուսնի տակ ես կարողացայ պատսպարել նորան անձրևի հեղեղից։ Ես ինքս ծառի տակ նըստած, իմ շատ սիրականը ծնկերիս վերայ լուսնած, և նորա մերկ ոտերը ջերմացնելով իմ ձեռներիս մէջ, ես աւելի երջանիկ էի, քան թէ նորահարս կինը որ առաջին անգամը իւր որովայնի պտուղը զգումէր խաղալ իւր արգանտի մէջ։

Մեք ականջ էինք դնում փոթորկի շառաչիւնին. յանկարծ զգացի ես մի արտասուք Ա՛թալայի աչքից թափուիլ դոգիս մէջ։ «Ով փոթորիկ սրտի, աղաղակեցի, մի թէ այս մի կաթիլ է ձեր անձրևի»։ Ցետոյ պինդ գրկախառնելով իմ սիրելին, ասացի ես, «Ա՛թալա, դու մի բան թաքցնումես ինձանից. բացիր ինձ քո սիրտը, ով իմ նազելի, դա շատ օգտակար բան է, երբ մի բարեկամ ներս է նայում մեր հոգու մէջ։ Պատմիր ինձ այդ միւս գաղտնիքը քո ցաւի, որի մասին այդպիսի կամակորութեամբ լուռ ես։ Ո՞հ, ես նկատումեմ, դու արտասուումես քո հայրենիքը»։ Նա խնդրի պատասխանեց «Ով դու, որդի մարդկութեան, ի՛նչպէս կարող էի ես արտասուել իմ հայրենիքը, որովհետև իմ հայրս չէ բնիկ արմատներիքի աշխարհի։—Ի՛նչպէս, երկրորդեցի ես խորին զարմացքով, մի՞ թէ քո հայրը չէ արմատներիքի աշխարհից։ Ուրեմն ո՛վ է այն մարդը, որ քեզ ծնել է դեպ ի լոյս աշխարհ։ Պատասխանիր»։ Ա՛թալան խօսեց այսպէս.

«Յառաջ քան թէ իմ մայրս հարսնաբաժինք է բերել Սիմաղան պատերազմողին երեսուն մատակ ձի, քսան գոմէշ, հարիւր չափ կաղնու խղճ, յիսուն մորթ կուղպի և այլ հարստութիւնք շատ, նա ունէր կենակցութիւն մի մարդու հետ սպիտակամորթների սեռից. իմ մեր մայրը ջուր ածեց նորա

երեսին [1]) և հարկադրեց նորան ամուսնանալ մեծահոգի Սիմաղանի հետ, որ ամենևին նման էր մի թագաւորի և մեծարուած ազգերի մէջ, իբրև մի ոգի։ Բայց իմ մայրս ասաց իւր նորափեսային. «Իմ արգանուս յղացած է. սպանիր ինձ»։ Սիմաղանը պատասխանեց նորան. «Գերագոյն ոգին պահպանէ ինձ մի այդպիսի չարագործութենից. ես չեմամիտ կտրել ոչ քո ականջները, որովհետև դու արդարութեամբ խոստովանեցիր քո մեղքը, և չես ապականել իմ ամուսնական անկողինը։ Քո որովայնի պտուղը կը լինի իմ պտուղը, և ես չեմ մերձենալու քեզ, բայց միայն ըրնձադաշտի թռչունի անզգամութենից յետոյ, երբ որ տասներիքերորդ լուսինը փայլած էր»։ Այն այս միջոցիս ես ծակեցի իմ մեր արգանդը և սկսայ աճել, հպարտ որպէս սպանիցի և որպէս վայրենի։ Իմ մայրս շինեց ինձ քրիստոնեայ, որպէս զի նորա աստուածը և իմ հօր աստուածը լինի նոյնպէս իմ աստուածս։ Ապա հետև սիրոյ ցաւը այցելութիւն արեց նորան, և նա իջաւ այն փոքրիկ, մարթապատ փոսի մէջ, որ ասկից ոչ ոք այլ ևս դուրս ելանում չէ»։

Այսպէս եղաւ Ամալայի պատմութիւնը։ «Ուրեմն, ով էր քո հայրը, անբաղդ որդիկ դու, ասացի ես նորան. ինչ անուանակոչութիւն էին նորան տալիս մարդիկ երկրիս վերայ, և ինչ անուն կրում էր նա ոգիների մէջ։— «Ես երբէք լուացած չեմ հօրս ոտները, ասաց Ամալան. գիտեմ միայն, որ նա բնակուում իւր քոանի հետ Սուրբ Օգոստինոսում, և թէ նա միշտ հաւատարիմ է եղած մնրս։ Նորա անունը Փիլիպոս էր հրեշտակների մէջ, և մարդիկ անուն էին տալիս նորան Լոպեզ»։

Այս խօսքի վերայ արձակեցի ես մի աղաղակ որ դղրդեց լոյոր անապատը. իմ հիացքի ձայները խառնվեցան փոթորկի աղմկի հետ։ Ամալան սեղմած սրտիս վերայ, ես աղաղակեցի հառաչանքով. «Ո՛վ իմ քոյր, ով դուստր Լոպեզի, դուստր իմ բարերարի»։ Ամալան, զարհուրած, հարցրեց ինձանից թէ ինչ էր պատճառը իմ սրտի շարժողութեան. բայց երբ որ իմացաւ, թէ Լոպեզն էր այն ազնուամիտ հիւրասէրը, որ ինձ որդեգրել էր Սուրբ Օգոստինոսում, և որից հրաժարուել էի ես, ազատ լինելու համար, նա ինքն ըմբռնուեցաւ մի շփոթութենից և ուրախութենից։

Երդէն մի չափից դուրս երջանկութիւն էր մեր սրտի համար այս եղբայրական բարեկամութիւնը որ այցելութիւն արեց մեզ և միաւորեց իւր սէրը մեր սիրոյ հետ։ Ահնուհետև Ամալայի ընդդիմութիւնքը դառնում էին անօգուտ. ես զգում էի որ զօր էր նա փախչում ինձանից, ձեռքը գնելով կուրծքի վերայ և գործելով մի անսովոր շարժուածք. ես արդէն բռնել էի նորան, արդէն արբեցած էի նորա հնչից, արդէն ըմպել էի ես սիրոյ կախարդական բաժակը նորա շրթունքից։ Աչքերը դէպ ի երկինք վերուղղած,

---

[1]) Այսինքն անպատուեց նորան, որ լինում ինդիանացոց մէջ ջուր ածելով մի անապակուած աղջկայ երեսի։

փայլատակութեան լուսի տակ ես իմ ամուսինը ըռնած էի գրկիս մէջ, գէմ ու դէմ Յաւիտենականին։ Ո՛վ Հոգւոյ անէծք, մեր աղէտքին և մեր սիրոյ մեծութեանը արժանի, ո՛վ դուք Հոգւոյ անուանները որ շարժումէիք ձեր լիանալքը և ձեր կատարները իրրև վայրագոյր և ամպհովանի մեր ամուսնական անկողնի վերայ, դուք վառուն եղևնիք որ կացուցանուէիք մեր հարսանեաց լապտերը, ով դուք, սահմանից դուրս եկած գետ, թնդացող սաբեր, ահաւոր և վեհմտիտ բնութիւն, մի՞թէ դուք միայն լոկ ցնորք էիք, մեզ խաբելու համար պատրաստուած, և մի՞թէ կարելի չէր ձեզ մի րոպէ պատսպարել ձեր խորհրդական արհաւիրքի մէջ մի մարդու երջանկութիւն։

Ա՛մէն ցուցանուէր այնու հետև մի նոյն ընդվզմութիւն միայն. ես արդէն մօտ էի բաղդաւորութեան րոպէին, և ահա մի սաստիկ փայլատակութիւն, որին հետևեցաւ մի կայծակնաղարկութիւն, ակօսեց ստուերների թանձրութիւնը, լցրեց անտառը ծծմրով ու լուսափայլութեամբ և խորտակեց մի ծառ մեր ոտքի մօտ։ Մեք փախանք, ով անակնկալ անցք... այն լուսթեան մէջ որ հետևեցաւ դորան, մեր լսումնքը մի զանգակի ձայն։ Մեր երկուքս անխօս ու անրարբառ, ականջ ենք դնում այս ձայնին, որ այնքան օտար էր մեզ՝ մի անապատում։ Նոյն րոպէին հայեցանք մի շուն հեռակայքում. նա մօտենում է, կրկնապատկում իր աղաղակը, նա հասանում է մեզ և կաղկանձում է մեր ոտքի մօտ. մի ալևոր առանձնակեաց, կրելով մի փոքրիկ լապտեր, հետևում էր նորան խաւարի միջով դէպ ի անտառը։ Օրհնած լինի նախախնամութիւնը, ձայն արձակեց նա իսկոյն, երբ որ նկատեց մեզ. վազեց արդէն ես որոնում ձեզ։ Մեր շունը իմացել է ձեզ փոքրկի սկզբից և ինձ բերել է այս տեղ։ Բարի աստուած. ինչպէս մանուկ են օձք. անբաղդ տղայք, ինչքան պիտի տանջուած լինիք դուք։ Եկէք, գնանք. ես բերել եմ հետս մի արջի մորթի. սա կը լինի ծածկոց այս պատանի հնոջ համար. ահա ձեզ մի փոքր գինի այս դժմարուակի մէջ։ Աստուած գոհարանուի իր բոլոր գործերի մէջ. նորա զթութիւնը շատ մեծ է և նորա բարութիւնը անսահման է։

Ա՛մէն չոքած էր կրօնաւորի ոտքումը. «Առաջնորդ աղօթքի, նորան աստուձր նա. ես քրիստոնեայ կին եմ. երկնաւոր տնօրէնութիւնն է, որ ուղարկել է քեզ փրկելու ինձ։— «Իմ դուստր, ասաց առանձնակեացը, բարձրացնելով նորան գետնից, մեք սովորաբար զարկուածնք առաքելական միաբանութեան զանգակը գիշերի և փոքրիկների միջոցին, ժողովելու օտարականքը. և ինչպէս մեր եղբարքը Ալպիան սարերում և Լիբանանում, նոյնպէս և մեք սովորեցուցել ենք մեր շունը որոնելու և գտանելու մոլորուած ճանապարհորդը»։ Իմ մնաին պիտի ասեմ, ես հաղիւ թէ հասկանում էի առանձնակեացի ասածը. այս քրիստոնէական մարդասիրութիւնը երևում էր ինձ այնքան վեր մարդկային կարողութենից, որ ես կարծում էի լինել երազի մէջ։ Փայլողութեամբ այն փոքրիկ լապտերի որ րոնած էր կրօնաւորը, ես աղօ-

տապէս նկատեցի նորա մօրուքը և մազերը ամէնևին թրջած ջրից. նորա ոտերը, նորա ձեռնները և երեսը արիւնի մէջ շաղախուել էին գլխից։ «Ով ծեր, ազազակեցի ես վերջապէս, այդ ինչպէս սիրտ ունիս դու, որ չես վախենում կայծակնազարկուելուց։— «Վախենա՞լ, կրկնեց հայրը մի փոքր տաքացած. վախենա՞լ, երբ որ մարդիկ գտանվում մէնի վտանգի մէջ, և ես կարող էի օգտակար լինել նոցա. ուրեմն ես պիտի լինիմ մի շատ անարժան սպասաւոր Յիսուս Քրիստոսի։— Բայց, գիտե՞ս դու, նորան ասացի ես, որ ես քրիստոնեայ չեմ։ — Երիտասարդ դու, պատասխանեց միայնակեացը, մի՛ թէ քեզանից հարցրած եմ քո կրօնը։ Յիսուս Քրիստոսը չէ ասել. «Իմ արիւնս կը քաւէ այս ինչ մարդու և ոչ այն ինչ մարդու մեղք։ Նա մեռած է և Հրէայի և Հեթանոսի համար և նա բոլոր մարդիկը հաւասարել է եղբարք և տառապեալներ։ Ինչ որ ես այս տեղ առնում եմ ձեզ, մի շատ հեշտ բան է, և դուք կարող էիք այլ տեղ գտանել միւս շատ օգնականութիւնք. բայց դորա վաստը երբէք վայելում չէ քահանաներին։ Ինչ ունիք մեր, տկար միայնակեացս, եթէ ոչ կապտա անօթներ (գործիք) մի երկնային պաշտօնի։ Որ. ծր զինուորը լինելու էր այնքան վատասիրտ, որ չհետ փախչէր, երբ որ նորա առաջնորդը, խաչը ուսին և ճակատը պսակած փշով չառաջընթաց է նոր բան, օգնելու մարդկութեանը։

Այս խօսքերը դղրդեցին սիրտս. Հետզհետէ և գիտութեան արտասուք թափվեցան աչքերիցս։ Իմ սիրելի մանուկներ, ասաց առաքելագործ մարդը. ես հովվում եմ այս անտառների մէջ մի փոքրիկ հօտ ձեր վայրենի եղջերներից։ Իմ օթևանս բաւական մօտ է այս տեղից, սարի մէջ. նկէք և տաքացնէք իմ մօտ. դուք այն տեղ գտանելու չէք կանչի յարմարութիւնը, բայց կ'ունենաք այն տեղ մի պատսպարան, և դորա համար պիտոյ էր շնորհակալ լինել աստուածային բարութենից, պատճառ, շատ մարդիկ կարօտ են և դորան։

(Շարունակութիւնը միւս տետրակում։)

Ս. Նազարեանց։

ԵՐԵԽԱՑՔ ԻՒՐԵԱՆՑ ԿԵԱՆՔԻ ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻՆԵՐՈՒՄ։

Ս֊վ֊ր֊ԲԵԱՆ և օբինակի սասարկ ներքորձո֊ԲՒ֊ՆԸ ֆուրկ երեխաների վերայ։

Բնակարանը։

(Թարգմանութիւն Ռուսերէնից.)

Ծնողք պարտին ամենեին չմոռանալ, թէ նոցա երեխայքը առաջին բարոյական տպաւորութիւնը ստանումեն իւրեանց Հայրական տանը. ուստի ամենարանը այս բանում կարող է յառաջացնել շատ տակաւ։ Առանց որ և իցէ երկբայութեան, լաւ ուսումնարանում Հոգատար են լինում աշակերտների ոչ միայն իմացականութեանը պէտ սրտին, կամ միւս բառերով ասել, լաւ ուսումնարանը ոչ միայն ուսուցանում է, այլև դաստիարակում։ Բայց բանն այն է, որ ուսումնարանական դաստիարակութիւնը ուղիղ և բարւոք հասանում իւր նպատակին այն ժամանակ միայն, երբ մանուկների մէջ իւրեանց ծնողքը սերմանած են Աստուծոյ երկիւղն և բարոյականութեան սերմերը։ Հիմքը կրօնական և բարոյական կրթութեան կարող է դնել մի միայն սիրող և խելացի մայրը։ Եթէ այս հիմքը չկայ մանուկի մէջ, ուսուցիչը շատ սակաւ կարող է պտղաբեր լինել։ Բոլոր խորհուրդը սկզբնական դաստիարակութեան ոչ այլ ինչ է, եթէ ոչ տալ բարի օրինակ։ Ուր չկայ այս, այն տեղ մի յուսաք ոչ մի լաւ արդիւնք։ Խրատներ և ամենայն տեսակ յանդիմանութիւնք կորուստանումեն իւրեանց զօրութիւնը այն տեղ, ուր միշտ երեխաների աչքի առաջև դրած են չար օրինակներ։ Ինչով, եթէ ոչ տնային դաստիարակութեան ազդեցութեամբ, կարելի է հասկանալ, որ շատ երեխայք, թէպէտ ստացել էին մի լուսաւոր դպրոցական կրթութիւն, այնուամենայնիւ մնումեն հետ բարոյականութենից։ Սիրտը երեխայի շատ ըմբռնող է. նա զգումէ բարի, երբ երեխայն տեսանում է բարի օրինակներ, և զգումէ վատ, երբ երեխայն տեսանում է իւր չորս կողմում միայն վատը։ Ուրեմն կամիք, աշխատեցէք հասկացնել երեխաներին, թէ պիտոյ էր լինել բարեբարոյ, օգտակար մարդ. սրբեմն կամիք, խրատեցէք նորանց այս մասին, ամենը կը մնայ անօգուտ, եթէ նորա կ'տեսանեն, թէ ձեր խօսքերը համամատ չեն ձեր գործերին։ Երեխայութեան վերջին տարի նեղում, երբ սկսա֊

նումն զարթնուլ երեխայի հոգեկան կարողութիւնքը, իրատը, կարելի է ասել, ունի ներգործութիւն,—ի հարկէ և այն ժամանակին չէ պարտ, որ նա զանազանվի գործերից. բայց երեխայութեան առաջին տարիներում, օրինակը, միայն օրինակը է ներգործողը։

Երեխաների մտաւորական զարգացմանը խնամատար եղիք առաւելապէս, որ նոքա չմնան առանց իրենց հասակին պատշաճաւոր աշխատութեան, վասն զի միտքն չէ պարտ մնալ առանց կերակրի. զարձուցէք երեխաների ուշադրութիւնը նոցա շրջակայ նիւթերի վերայ և ջանացէր եղիք տպաւորել այդ նիւթերը երեխայական մտքում, ի հարկէ միտ դնելով այն բանին թէ որչափ ըօրացել էր նոցա զգայական ընդունակութիւնը, վասն զի զգայական ընդունակութիւնը հիմքն է ամենայն բանական զարգացման։

Ա՛արդը, ապրելու համար, պարտ է անդադար իւր շրջակայ օդից ընդունել իւր մէջ մի որոշեալ քանակութիւն. իսկ անային օդը, շնչառութեամբ և շնչարձակութեամբ կորուսանում է այն մաքրութիւնը, որ հարկաւոր է մարդու առողջութեանը։ Այսպէս, օդի կենսական մասը, այսինքն թթուածնի թը անդադար մաշվում է։ Սորա համար անպատճառ հարկաւոր է ամենայն օր, որքան կարելի է, մաքրել տունը ներս թողնելով դուրսի յստակ օդը։ Նոյնպէս մեծ խորհուրդ ունի փիզիկական զարգացման մէջ և այն պայմանը, թէ սրպիսի յատկութեամբ հողի վերայ է շինած տունը. սրգիօք առ՞ոջ, թէ վատառողջ. նոյնպէս, տունը կարող է լինել առաւել մութ, իսկ լոյսը անշուշտ հարկաւոր է մարդուն, որպէս և օդը։ Կան այնպիսի տուներ, որոնց մէջ դժուար է ըստ պատշաճին նորոգել օդը, որովհետև անյարմար էր նոցա շինուածքը. բաց ի սորանից, շատ անգամ մերձաւորութիւնը դադարուն ջրի ապականութեամբ բոլոր տունը վնասակար արտաշնչութեամբը։ Ի հարկէ, չափահաս մարդը կարող է որպէս և իցէ ընդդիմանալ այս բոլոր ձախողակ պայմաններին. նորա կազմուածքը բաւական ամուր է այս զանազան վնասակար ազդեցութիւններին տանելու։ Բայց ո՛չ այսպէս է երեխայն. սա անպատճառ վնաս կը կրէ իւր շրջակայ անյաջող իրողութիւնների կործանիչ ներգործութենից։ Վատառողջ բնակարանում չէ կարելի անուշանալ առողջ երեխայը։ Ցայտնի է, որ ո՛չ ամենքը ունին կարողութիւն բնակելու այնպիսի տնում, որ համեմատ լինի բոլոր ասացեալ յատկութեանց պայմաններին. բայց այս ևս յայտնի է, թէ ստէպ ստէպ նորոգութիւնը օդի տան մէջ և լուսամուտներ շինելը բաւական թուլացնում վնասակար ազդեցութիւնը վատառողջ բնակարանի։ Բայց եթէ դուք ձեր բոլոր ջանագրութեամբ կարող չեիք ձեր բնակարանը առողջաւէտ կացուցանել և բժիշկը ասում ձեզ, թէ ձեր բնակարանը վնասակար է առողջութեան, ապա իսկոյն տեղափոխվեցէք դէպ ի միւս տուն, թեև այս միւսը ո՛չ այնքան յարմար լինէր, որպէս առաջինը։ Բարեկեցութիւնը ձեր զաւակների վերջապէս ձեր յատուկ բարեկեցութիւնը պահանջում է այս։ Հաւատացէք, թէ վա-

տառողջ բնակարանը ոչ ինչ միասական ապրեցութիւն չունի ձեր առողջութեան վերայ. ոչ, ձեր առողջութիւնը անդրալի կերպով կմնաշուի, իսկ առողջութիւնը և կարողութիւնը անշուշտ հարկաւոր են ջրաւոր մարդուն, վասն զի կարողութիւնը է աշխատութիւն, իսկ աշխատութիւնը — բարեկեցութիւն։

Ուրեմն այս ամեն, վերևում ասածներից հնշտ կարելի է իմաստասիրել, թէ ինչ է պահանջվում առողջ բնակարանի համար։ Ջոր ղրութիւն տեղի, արձակ տարածութիւն, բաւականաչափ օդ, որքան կարելի է, անդադար մաքրութիւն օդի և պայծառ լոյս։ Բայց առողջաւէտ բնակարանը ևս դառնում վատառողջ, եթէ նոսկսպ սկսը մաքրելու նորա միջի օդը։

Հարուստ մարդիկ, որպէս յայտնի է, ունին առ հասարակ առանձին սենեակ երեխաների համար։ Իմ կարծիքով, այս սենեակը ամենևին աւելորդ է։ Առաւել լաւ է, եթէ երեխայն մեծանայ մեր աչքի առաջէ, քան թէ առանձին սենեկում, զգեակի վերակացութեան տակ։ Քանի անգամ տեսած եմ, որ առաւել լաւ սենեակները տան միջ կարգուած են դահլիճի և հիւրանոցի համար, այսինքն ոչ թէ իւրեանց համար, այլ հիւրերի։ Իսկ ինքեանք տանու տերը բոլոր գերդաստանով նեղվում են երկու որևիսկ և իցէ փոքրիկ շնչակեղդ սենեակներում։ Ահա հասարակ ննջարանը և երեխաների սենեակը լինում են տան միջի բոլոր սենեակներից վատը։ Այո, տպրելը առ ի ցոյց մարդկան, մեղանում բանում առաջին անը։

Բայց եկէք, տեսանենք այս խնդիրը միայն ինչ բանականաբար։ Ո՞ւմ պատշաճաւոր էր տան միջ առաւել լաւ սենեակը։ Հիւրերի՞ն, ծնողների՞ն, թէ երեխաների՞ն։ Անկարկած, այն հանկներին, որոնք իւրեանց ծնողների առաջին զանձերն են, այսինքն երեխաներին։ Այն ծնողը, որոնք չեն հասկանում թէ երեխայը նոցա առաջին զանձերն են, արժանի չեն ոչ խօսքի և ոչ պատճառաբանութեան։

Գրիգոր Բեկնազով։

(Հաշտարեանից)

ԱՐՁԱԳԱՆՔ

ՀԱՇՏԱՐԻՆԱԿԱՆ.

Յիրաւի լինում են այնպիսի ժամանակներ մարդկային կեանքում, որ երբեմն մարդ դէպ ի մի առարկայ լինում այնպէս թմրած և անզգայ, որ կարծես թէ չկայ ամենևին այն բանը աշխարհում նորա համար. իսկ ընդ հակառակն մի այլ բանի կամ առարկայի լինում այնքան ուշադիր և հետաքրքիր, որ իբրև թէ ոչինչ այլ բան չկար նորա համար ուշադրութեան արժանի: Ով իմն էսորա իսկական պատճառն, կամ թէ ինչ բնական կամ անբնական ազդեցութից է յառաջանում այս երևոյթը, մեք չեմք ձեռնամուխ լինում բացատրել այս տեղ յառաջագոյն, որ գուցէ ինքներին կ'լուսաւորեալ յետագայ օրինակներից. այլ այսքանս միայն կամիմք ասել, որ այսպէս ևս պատահում բոլոր ազգի կամ մի քաղաքի մէջ, ուր երբեմն մի անգլ կամ մի խնդիր, ըստ երևութին բաւականին մեծ և հարցասիրութեան արժանի, այնու ամենայնիւ մնում առանց ներգործութեան ժողովրդի վերայ, իսկ ընդհակառակն մի այլ նոյնօրինակ խնդիր, թէև ըստ երևութին ոչ այնքան մեծ, բայց ներգործում շատերի սրտի և ուշադրութեան վերայ. սոյն այս երկու տեսակի պատկերքն ևս մեք ՝աշտարխանում ազգայինքս տեսանում ենք ակնյայտնի այս տարու քանի մի յօդուածոց վերայ, որ տպագրուեցան զանազան ազգային օրագրաց մէջ. պարոն Ալրքեզեանցի և պարոն Նազարեանցի գրուածները. սոցանից առաջինի, այսինքն Ալրքեզեանցի գրուածքը կամ, լաւ ևս ասել, պատասխանութիւնն (այսպէս ասում ենք այն պատճառաւ որ ամենայն մարդասիրել քաղաքավարութենից դուրս էին նորա յօդուածներն) թէպէտ և կարդուեցան շատ մարդկանց մէջ, սակայն ոմանց պատասխանեցին զգուանք, ոմանց արհամարհութիւն, իսկ ոմանց արդարացի բարկութիւնն անգամ շարժեցին այդ անար-

ժան գլուածներն ընդդէմ մի հերձուածի որոյ արժանաւորութիւ-
նը գիտեն և վկայեն բոլոր բանիմաց պիտանականք, ոչ թէ միայն
Հայոց, այլ և միւս ազգաց. որոյ անմահ գործերն կան և մնան
յաւիտեան ի վկայութիւն և ի յիշատակ փառաւոր և հոյակապ
անուան նորա... Եւ այդպէս Ձերքեզեանցի գլուածքն տեղիք
չգտան ոչ մի խեղճի և բալեխիղճ մարդու արտուքին, որ ձայնա-
կից լինէր պարսն Ձերքեզեանցին և կամ գոնէ հաւանութիւն տար
նորա ասացուածքին. իսկ ընդ հակառակն դերապատիւ Նազա-
րեանցի գլուածքը որն և իցէ, եթէ ընթեռնուին մինը փոքր ինչ
ուշադրութեամբ, այնքան է գրաւուած մարդոյ սիրտը և միտքը,
մինչև ամեն մի տողը դառնուին ժողովրդոց միջին նիւթ խօսակ-
ցութեան, քննութեան, մտածութեան, և ուրախութեան հան-
դերձ զուարճալի բանապիտութեամբ. ի հարկէ փոքր ի շատէ կար-
գացող, մտածող և հասկացող մարդկանց մէջ, և ոչ թէ ամե-
նևին անկիրթ ուսիկների համար: Նոյպէս և դերապատիւ Նա-
զարեանցի հրապարակական նամակը առ պատուելի ազգն Հայոց,
որ տպած էր ներկայ 1861 թուականիս ի Կ. Պոլիս տպարանի
կան, երես 234—241: Ի ընթեռնուել բանին թէպէտ և սակաւ
ոմանց մէջ, սակայն իսկայն իրրև մի ելևքտրականութիւն տպած-
ուեցաւ համարեա թէ ամենեցուն մէջ. և լսուեցաւ արձագանգ
բազմաց կողմից, որ սկան խօսակցիլ և ձեռ ի ձեռն մեն ածել այն
հինեւորդ տեսարանն, և ով որ կարդաւներ, իսկոյն ասուներ. ահա
ժամանակ ձայն արձակելոյ, ահա պիտոյ է այժմ յայտնել ամենե-
ցուն իւր կարծիքն և իւր սրտի վկայութիւնը. և ոչ թէ լռել ևս,
և այնու միայն արհամարհել Ձերքեզեանցի գլուածքն ինչպէս մին-
չեւ այժմ եղել է. և մանաւանդ կարդալով նոյն տեսարանի մէջ
տպած նամանն Յակովբ Սիրովբեանցի առ հրատարակողն, կրկին
խրախուսուեցան ոմանք և սիրտ առացան միանգամայն. սկսան ա-
զազակել թէ մինչև երբ պիտոյ էր մեզ լռել և չտալ ձայն և չվկա-
յել ճշմարտութիւնը. մինչև երբ քնած մնալ մեր ազգի խարդախ
մարդկանց օրօրոցի երգերովը որ մինչև յայժմ մեզ վիրացնելով և
դովելով ուռցրել են ժողովրդի գլուխները, մնացել է ազգը այս աս-
տիճանում, և որոյ մեծ ման լինելով անկիրթ և անուսումն, հա-
մարուին իւրեանց անձը կատարեալ մարդիկ. մինչև անգամ, եթէ
մինը ճշմարտութիւնը յայտնելով բացուէ փոքր ի շատէ հաղա-
րատ տարիներով ծածկած քօղերի մի ծայրը և ցոյց տալու ազգի

որևիցէ պահապանութիւնը, նմանապէս և նորա ուղղութեան ճանապարհը, այսինքն հարկաւորութիւնը անպատճառ լուսաւորութեան, կրթութեան և բան ուսանելոյ. իսկոյն ոչ թէ միայն անկրթի ժողովուրդն, որ չհասկանալով ընդդիմանուելէ, այլև նոցա ուղեցոյց առաջնորդներն, և Չերքիզեանցի պէս իրեւ ուսեալ մարդիկ մինչև անգամ, կամենուելն զանազան մտաի բաներով պատերազմիլ ճշմարտութեան ընդդէմ, հակառակ ժամանակի յառաջդիմութեան հոգուն, և կամելով միանգամայն փակել ամենայն նոր ճանապարհ լուսաւոր գաղափարների, պղտորում և խանգարումն ամենևին հասարակութեան միաքն և գաղտղութիւնը, այնպիսի տգիտական առասպելախօսութեամբ, մինչև յանդգնուելն ասել թէ Պրիստոս չասաց «Թէ մեծ մեծ գիտութիւններ ունենաք, այլ պիտոյ է հաւատալ միայն»:

Այն լոյն աշխարհի, որ եղև մարդկային ազգի փրկութեան միակ պատճառն, որ հրամայումէր թէ «Քննեցէք զգրոց զի նոքօք համարիցիք ունել զկեանս յաւիտենական», որ ասումէր թէ «Ձեզ զերծաք կատարեալք որպէս և Հայրն ձեր երկնաւոր կատարեալ է» որ յանդիմանութեամբ անմտութիւնը վարկեցոյց ասելով «Պատ և վարդապետ Իսրայելի և զայս ոչ գիտես» և այլն և այլն... որ միանգամայն լուսատուից իւր հետևողից միաքը և հասկացուից նոցա, թէ լոկ ստուերական օրինաց կատարմամբ ծէսերով և արարողութիւններով ոչ ինչ փրկութիւն չէ լինելու, այլ ասաց թէ հարկաւոր է խնդրել և գտանել ճշմարտութիւնը «Եւ ճանիցէք զճշմարտութիւնն և ճշմարտութիւնն ազատեսցէ զձեզ» որով և յիրաւի ազատեց հաւատացեալ մարդկութիւնը հին օրինաց ամենատեսակ ծանրութիւններից և ծառայական ստրկութեան մրաքերից, և որով արդարապէս կոչվեցաւ փրկիչ աշխարհի. իսկ եթէ չէին եղել փրկչի լուսաւոր գաղափարներն նմանապէս և նորա Եռաքիալ մեծ ախոյեան քրիստոնէական լուսաւորութեան պաշտպան խորին և բարձր իդէաներն, ո՛ր պիտի մնար քրիստոնէութիւնը. ոչ ազաքին մարդկային ազգը մնալու էր հետամուտ հրէական թեոկռնց ծանրութեան տակ, չհամարձակելով ոտն յառաջ դնել, հրէայք իւրեանց տուեալական հին օրինակաւորութեան և հիթանոսքն իւրեանց առասպելական բարբարոսութեան մէջ: Եւ այս ամենայն լուսաւորութեանց և գիտութեանց պատճառ և նախադաստիարակ Պրիստոսն կամի՞ն չինել արգելք գի-

տութեանց և լսաւորութեանց, ասելով «թէ Նա չէ ասել, պիտոյ է մեծ մեծ գիտութիւններ ունենաք» այլ իբրև թէ ասել է, կայր կուրծքին պիտոյ է հաւատայք ամենայն յիմարութեանց և անմտութեանց. իբրև թէ չէ ասել «Նչեքուք խորագիտք իբրև զօձս և միամիտք իբրև զաղաւնիս». իբրև թէ չէ ասել «Կայր կուրի ոչ կարէ առաջնորդ լինել և երկոքեանն ի խորխորատ անկանիցին». և այլն և այլն:

Արդեօք այս ամենն այսպէս տեսանելով, ինչպէս կարող ենք չզղջալ ընդդէմ այսպիսի միաբեր քարոզող և ճշմարիտ լսաւորութեան ճանապարհներն փակող հերձեալների և մանաւանդ ընդդէմ պարոն Ալիքեսեանցին, որ գուցէ ունենալով մի անձնական պատճառ թշնամութեան գերապատիւ Նազարեանցի հետ, այսպէս յանդգնաբար յարձակվելով նորա վերայ, կամենում արգելք լինել նորա գործունէութեանը, բայց դրանով մեղանչում նա ընդդէմ ազգին, որոյ և մեք մի մասն լինելով, և ունենալով նոյնպէս իրաւունք, ինչպէս հարազատ անդամք ազգի և եկեղեցւոյ, համարձակումենք ձայն բարձրացնել և յայտնել մեր կարծիքն, որպէս գերապատիւ Նազարեանցի գրուածոց մասին, նոյնպէս և ընդդէմ Ալիքեսեանցի վաստաբանութեանցն: Մենք պարոն Նազարեանցի բազմահատոր գրուածոց ոչ մէկին անգամ չենք համարում դատապարտութեան արժանի, այլ ընդհակառակն տեսանուենք նոցա մէջ ընդհանուր լսաւոր գաղափարներ, խոյսիմաստ և հաստատուն դատողութիւններ և միանգամայն հաւաբակաց մարդավայել գիտական և ազգօգուտ միտքեր և առաջարկութիւններ համեմատ մեր ազգի սիրոյքին, համեմատ մեր եկեղեցւոյ ազատ քրիստոնէական հոգւոյն. վասն որոյ ընդհակառակն տեսանելով պաշտպանուենք մենք բոլոր աշխատութիւններն Ազգի լսաւորութեան ասպարիզուին:

Իսկ ընդ հակառակն բողոքուենք ընդդէմ Ալիքեսեանցին և միանգամայն մերժուենք նորա բոլոր ընդոծոյն հոգով գրուածներն ընդդէմ մի այնպիսի հերձեալի որպիսի է գերապատիւ Նազարեանցն, և որոյ համեմատ ցանկալի էր ազգին ունենալ գոնէ մի քանի հատ ևս, և այս ասուենք ոչ թէ մերպատճառութեան և շողոքորթութեան մտօք, որ ոչ մեք առնելու և ոչ պարոն Նազարեանցն ընդունելու կարօտութիւն ունի, այլ ասուենք մեր յատուկ սրտի վկայութեամբ, այլև կարծուենք որ շատերք ևս կ'համաձայնին մեր

Հետ, եթէ չկամիմ պատասխանատու լինել իւրեանց խղճի տա-
ջեւ։ Այլ, այդ փոքր է, մեք հանդիսակուսինք մտածել, որ Նա-
պատ-
րանքի նոյն իսկ չարեացսկսամ Ձեզբիզեանցն, եթէ ձեռք սրտի
վերայ դրած և անխարդախ մտքով գտանեմ լինի, պարտական է
մեզ ձայնակից լինել, եթէ ոչ հրապարակաւ, գոնէ առաջի իւր
յատուկ խղճի մտայն, միայն թէ նա այդ ստատուածներէն ձայնը իւր
սրտի մէջ, կտնաւ և գիտութեամբ չէր խլացուցիչ, չէր թմրեցու-
ցիչ. այդ նեղքին վիպայի և գաղտնարի ձայնը, որ նախախնամու-
թեան ամենիմաստ անտեսութիւնը դրել է ամենայն մարդկային սրտի մէջ,
մինչև անատաս սրնակ վայրենիքին անգամ ըստ իւրեանց կեանքի պայ-
մաններին, չեն բոլորովին զուրկ այդ վիրնական պարգեւից...։

25 ին Նոյեմբեր 1861 թուակ.

ՀԱՅՏԱՐԱԿՉԱՑ։

ԱՅՍՐԱԳՐՈՒԹԻՒՆՔ ՀԱՅՆԱԿՈՑԱՑ.

ԱԶՆՈՒԱԿԱՆՔ.

Սարգիս Սերեբրեաքեանց.
Նիկիտա Խոջայով։
Գրիգոր Տէր Ահարոնեան Պապաչեանց։
Խաչատուր Ահարոնեան Պապաչեանց։
Ե. Մ. Մելիքիքեանց։
Պապազանոն Տաղտոյի Պօբրիել Յովհաննէսեան Ռ–լոխանեանց։

ՎԱՃԱՌԱԿԱՆՔ.

Յովհաննէս Մ. Սայեաթնովեանց։
Յակոբ Եղիայան Խրմաճեանց։
Յովհաննէս Պապազեանց։
Սարգիս Մանուկեան Ալաջալեանց։
Սիմեօն Սարգիսեան Խոջայեանց։
Կարապետ Յարութիւնեան Ալիանաչեանց։
Յովհաննէս Պիպանեանց։
Խարատօղի Քեամիլ Գրիգոր Պաբազեանց։
Գեորգ Թոփալեան Ղարիբեանց։
Գրիգոր Կարապետեան Նազարեանց։
Գրիգոր Եսայեան Գանգրեանց։

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՔ·

1·

ՀԱՇՏԱՐԽԱՆ·

Շնորհաւոր լինի նորամուտ տարիդ,
Ո՛վ դու Հաշտարխան, սիրուն հայրենիք·
Աստուած քեզ շնորհէ մի նոր շարժառիթ...
Որ Դու նորոգվիս իբրև մի փիւնիկ·

Արդէն անց կացաւ քանի՛ նոր կաղանդ,
Բայց դու չես թափում քո նինջ գիշերի,
Եւ քո ընատուր գեղեցիկ տաղանդ
Դեռ չես կացուցել շահաւէտ, բերրի·

Ա՛յո, Դու ունիս շնորհի ճըրագ·
Բայց միայն ծածկած դրուանի տակում,
Չես հանում նորան դէպ ի հրապարակ,
Որ նա փայլփայլի լոյս աշտանակում...·

Վ՛ եր կաց քո տեղից, կանգնի՛ր քո ոտին,
Մերժի՛ր քեզանից ծուլութեան ալոտեր·
Ցո՛յց տուր, թէև յուշ, դու պլըց մօտին,
Քո քանքար, քո շնորհ... աղպին օգտաբեր·

Թող խնացվի թէ, և դու Հաշտարխան,
Կենդանի ունիս Հայութեան հոգին·
Թէ կարող ես տալ յարմար պատասխան
Մեր ժամանակի բոլոր պիտոյքին·

Տնկի՛ր քո մէջին սուրբ սէր կենսաւէտ,
Սա ցիրոյ դրոշմ է, պահի՛ր դու անխախտ,
Սորանում պէտք է որ նիս յաւէտ
Քո խաղաղութիւն, փառք, պատիւ ու բաղդ·

Սկիզն է մի փայլուն, անպղտոր վըտակ,
Մի Թոռ, պղտորվի կիրքերի յեղոյզ.
Սա է տէրունի, օրհնարեր կոտակ,
Որ շէն է պահում քեզ տուն ու տեղով։

Ես քո փոքր զաւակ, Դու իմ մայր վսեմ,
Դու իմ խանձարուրք, Դու իմ օրօրոց.
Եթէ քո բարիդ և լաւդ չուզեմ,
Ապա չեմ որդիդ... այլ դժնեայ մի օձ։

Ո՜հ, երբ կը լինի, որ բաց աչքերով
Տեսնեմ քեզ ծաղկած իրրև բուրաստան.
Որ արժանանամ; ուրախ քնարով.
Երգել քո գարուն, քո բարեկենդան։

Իմ հոգուս մաղթանք, այս է հանապազ.
Քեզ խնամք տանէ, ստեղծողն Աստուած.
Որ Դու նորոգվիս ծաղկիս ու պանծաս
Պերճ քաղաքների շարքումը դասուած։

2.

ՀՐԱՒԻՐ ԱԶԳԱՍԻՐՈՒԹԵԱՆ.

Ցանկալի է ինձ, ազգասէր հերոսք.
Ձեր քաղցր անունին ուղերձել նուէր.
Ես ձեր հետ կամիմ խօսել երկու խօսք.
Ձեզ հաճոյ լինի իմ տկար հրաւէր։

Մեր աչքը ձգենք դէպ ի հայրենիք.
Նորա վիճակը մտածենք հանգարտ.
Ո՞ր տեղ է նորա, փառք, երկիր ընիկ,
Ո՞ւր էր նա երբեմն և կամ ո՞ւր է արդ։

Ասես Թէ իրրև մի երկրորդ Ադամ,
Արտաքսած, ձգած փափկութեան դրախտից,
Նստած միայնակ, տխուր ու տարտամ;
Գանգատումէ նա իւր ձախող բաղդից։

Եւ ո՛վ կը լինի նորան օգնական,
Նորա նորոգման միջնորդ մի ազդու.
Դո՛ւք հայրենասէր, հերոսք պատուական,
Ձեզ պարտ է լինել, նորան ձեռնտու։

Իրև հայրենեաց վեհանձն պաշտպան,
Հոպացէք Հայոց մի վիճակ պայծառ.
Երանի՛ ձեզ, թէ դուք միարան,
կանգնէք աղգութեան հաստատուն տաճար։

Նորա շինուածքի նիւթը հոգեղէն
Բարձէք, կրեցէք ձեր հոգու լծակով.
կախեցէք այն տեղ կանթեղ ոսկեղէն,
վառեցէք նորան պիտութեան լուսով։

Իրև ջանասէր, ժրապլուխ եղներ.
Լծուած աղգային վաստակի դութան,
փոխեցէք յառաջ ձեր մտքի քայլեր,
գործելու անխոնջ Հայոց անդաստան։

Քաջ մշակեցէք պղին Հայազգի.
Ջուր տալով նորան, ձեր քրտինք ու սէր.
Որ ղուարթի, դալար, տունկերը Հայկի
Բողբոջին, ծաղկին, լինին պտղաբեր։

Ջանադիր եղիք, հայկական անուն
Շինել աշխարհում՝ սուրբ և պատուական,
Ջնջել ու մաքրել այն կեղտոտ անուն,
Այն տգեղ կնիք չար տգիտութեան...։

Սփոփեցէք սիրով մեր մայր Հայաստան,
Սրբելով նորա արիւնոտ աչքեր.
Որ նստած մենակ, ողբումէ անձայն.
Պարզած դէպ ի ձեզ դողդոջուն ձիռներ։

Հաւատի կացէք, ձեր փոյթ և վաստակ
Երկնքից կ՝առնուն իւրեանց առատ վարձ.
Ատուած ձեզ կը տայ պարծանքի նոր թագ.
Որով կը խնդաք, յաւէտ պարծ ի պարծ։

Հայոց հարազատ, մտերիմ որդիք
Կ՝օրհնեն ձեր անուն, միշտ լիաբերան.
Ձեր սուրբ, անմոռաց, գործ ու երախտիք
Դրոշմելով սրտի տախտակի վերան։

Թայց և յատկապէս, ձեր մահից յետոյ,
Ձեր հողի վերայ կը մաշեն ծունկեր.
Ձեր միշտ պաշտելի, նշխարքին յարգոյ
Ծխելով անոյշ, բանաւոր խունկեր։

Ամեն հայ անցող ձեր շէրմի մօտից.
Իսկոյն յիշելով Ձեր արդիւնք ու երկ.
Կը լացագանչէ իւր սրտի խորքից.
«Ձեզ խաղաղութիւն, կենդանի՛ ոսկերք»։

Աբրահամ Գալոստեան Նոշաբեանց։

1 Յունուարի 1862 թուականի։

ՀԱՃՏԱՐԻԱՆ.

ՓԱՋԱԼԵՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԶԳԱՍՏՈՒԹԻՒՆ.

(Իւր քաղաքացիներին նուէր)

Բռա՛վո, եղբարք իմ փառաւոր,
Մի գործ այսօր Դուք գործեցիք,
Մի յաղթութիւն կատարեցիք,
Անմահութեա՛ն արժանաւոր։

Ահա վիշապ մի պղանդակ,
Ահա մի հրէշ ազգակործան —
Մի Մէհրուժան, մի պիղծ վաճառական —
Գլորուեցաւ ձեր ձեռքի տակ։

Բռա՛վո, եղբարք իմ պատուելի,
Ահա տեսէք, մարդկութեան մէջ
Չկայ ոչինչ անկարելի,
Եթէ կ'շարժուիք Դուք խելացի։

Խօսքով գործով թէ միաբան
Կը պաշտէք Դուք ազգի բարին,
Բոլոր գէւեր տարտարոսեան
Ձեզ վնասելու չեն բաւական։

Բռա՛վո, եղբարք իմ սիրական,
Ուղիղ շաւղի վրայ ոտք կոխած
Ցեանումեմ ձեզ օրըս պժմեան. —
Դէպ ի յառաջ, որդիք Հայկեան։

Ձեռքը ձեռքի, սիրտը սրտի
Հետ պինդ կապած, միշտ անբաժան,
Դուք կը մնաք անյաղթելի,
Ան ու սարսափ ձեր ոսոխի։

Բայց իմ եղբարք, Հայոց մարդեր,
Ունիմ ձեզ բան շատ ասելու.
Երկար օրեր, գառն փորձեր
Ինձ տուել են շատ խրատներ։

Ուրախ եմ ես տեսանելով
Ձեր պրական քայլափոխը.
Բայց գեռ ևս չէ ապահով
Վաստակածը ձեր քրտինքով։

Նպինքան կարօտ ըզգաստութեան
Է մի հիւանդ նոր ողջացած,
Որքան նոյն իսկ հիւանդութեան
Պէտք են խնամք, դեղ ու դարման։

Արթուն կացէք և հսկեցէք.
Ձեր թշնամին այն խոցուած,
Բայց մեռած չէ. ցած մի դրէք
Սուրը ձեռքից. պատրաստ կացէք։

Տեսանում եմ մութ աչքով.
Ձեր թշնամին հնարագիտ
Ամեն տեսակ փորձ փորձելով
Կամի ձեր մէջ յարդարել մուտ։

Արթուն կացէք, ով իմ Հայեր
Ձեր պրական պատուի վերայ.
Քանի գեռ ևս չէ մութ գիշեր,
Շահեցուցէք ձեր լոյս օրեր։

Թող Ձեր գալոց որդիք, թոռներ,
Նայելով Ձեր գերեզմանին,
Ձասեն. տեսէք, մեր հարք, պապեր
Կանպք էին, ոչ տղամարդեր։

Վ. Մոհպէեանց։

5 Յունուարի 1862 թուականի.

ԹԻՓԼԻՋ։

1. Հիսիսատիպ օրագիրը ամիս ամիս դուրս գալով, պարունակելու է իւր մէջ ճառեր ընդհանուր Երկրագիտութեան, ընդհանուր Պատմութեան և Աշխարհագրութեան, այլև մասնաւորապէս Հայրենական պատմութեան և աշխարհագիտութեան վերայ:

2. Կենսաբանական ճառեր, այսինքն բնութեան օրէնքների և դոյա գործադրութեան վերայ մարդուս օգտի համար, ճառեր զանազան ֆիզիքական յայտնագործութիւնների, հասարակաւոս Ատեղաբաշխութեան, Քիմիայի, Հանքաբանութեան և Ֆիզիօլօգիայի վերայ. այլև բանախօսութիւն տունկերի, գիտութեան արժանի բոյսերի, նոցա տնկարկութեան և օգտի վերայ, վերջապէս կենցաղօգուտ գիւտերի և յայտնագործութիւնների մասին:

3. Խարտեական, գեղեցիկ բանասիրական ճառեր, առաւել ընտիր մտածութիւնը և զգացողութիւնք թէ ոտանաւոր և թէ արձակ ոճով. թարգմանութիւնք հին հայկական, և հին ու նոր եւրոպական մատենագրութենից. այլև կրիտիկայք (ուսումնական քննութիւնք) նորատիպ հայերէն գրուածների վերայ:

Յանկացողքը առանձ այս օրագիրը կարող են հասուցանել իւրեանց խնդիրը կամ ուղղակի Հրատարակչին Մոսկվայի մէջ այսպէս. Въ Редакцію Армянскаго Журнала «*Отверное Сіяніе*», въ Москвѣ, на Черногрязкѣ, въ домѣ Статскаго Совѣтника С. Назарьянца. կամ թէ Մոսկվայի Նամակատանը այսպիսի հասցեով. Въ Газетную Экспедицію Московскаго Почтамта.

Տարեկան 12 տետրակների գինը է 8 մանէթ Մոսկվայի մէջ, բայց ուրիշ քաղաքների համար $9\frac{1}{2}$ մանէթ:

Печатать позволяется. С. Петербургъ. 23 Марта 1862 года.
Цензоръ *В. Бекетовъ.*